

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Լ. Զ Ո Հ Ր Ա. Բ Ց Ա. Ն

ՈՉԻՍՐՆԵՐԻ ԵՎ ԱՅՆԵՐԻ ՄԻ
ՔԸՆԻ ԿԵՐԵՎՈՐԱԴՈՒՅՆ
ՃԻԺՎԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՀԵԼՄԻՆԹՈՀՆՆԵՐԸ)

ՀԱՅՊԵՏՀՐԱՅ

636.3:576.895.1

13010

9-76 Գոհրաբյան, Լ.

Դիմումների և սպառք. Տ. բանի
կուտակության հոգեցույն. Մ.

Հայկ. ՍՍՌ Գյուղատնտեսության Մինիստրություն

Լ. ԶՈՀՐԱԲՅԱՆ

619.31: 616.962

Հ-76

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՈՉԻԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ՄԻ
ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ
ՃԻՃՎԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՀԵԼՄԻՆԹՈԶՆԵՐԸ)

130/0

A $\frac{\pi}{19125}$



ՀԱՅՊԵՏԱՆԱՑ
ԵՐԵՎԱՆ 1948

Л. ЗОРАБЯН

Некоторые важнейшие глистные
заболевания овец и коз.
(гельминтозы)
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1948

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՃԻՎՎԱՅԻՆ ՃԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճիճվային հիվանդություններ կամ հելմինթոզներ կոչվում են այն հիվանդությունները, որոնք առաջանում են պարագիտային կամ մակարույժ ճիճունների շնորհիվ:

Բնության մեջ գոյություն ունեն բազմատեսակ ճիճուններ կամ որդեր, որոնք իրենց ապրելակերպով բաժանվում են երկու մեծ խմբի: Դրանցից մի խումբն ազատ կյանք է վարում, իսկ մյուսը՝ մակարուժվում ուրիշի օրգանիզմում: Ազատ կյանք վարող որդերն ապրում են հողում, ջրերում, ճահճուտ վայրերում, իսկ կենդանիների օրգանիզմում ապրելու անընդունակ են: Եթե ազատ կյանք վարող որդերը պատահմամբ ընկնեն որևէ կենդանու մարտղական խողովակի՝ այնտեղ կոչնշանան:

Պարագիտային (մակարույժ) ճիճունները, կամ ինչպես նրանց անվանում են՝ հելմինթները միանդամայն այլ կյանք են վարում: Նրանք ուրիշ կենդանու օրգանիզմում մշտական բնակություն են հաստատում և նրա հաշվին ապրում սնվելով նրա սննդանյութերով և Հյութերով: Այն կենդանին, որի օրգանիզմում հելմինթներ են ապրում, կոչվում է վերջիններիս տերք:

Հելմինթների ձվերը կամ թրթուրները դուրս են գալիս արտաքին միջավայր մեծ մասամբ կղկղանքի հետ միասին: Արտաքին միջավայրում նրանք զարգանում, հասունանում են և իրենց տերթին վարակելու ընդունակ են դառնում՝ 1) ուղղակի ճանապարհով և 2) միջնորդ տիրոջ մասնակցությամբ:

Ուղղակի ճանապարհով զարգացումը կատարվում է հետեւյալ կերպ.— արտաքին միջավայր նոր դուրս եկած ձվերը և թրթուրները որոշ զարգացման ու փոփոխման են ենթարկվում, որից հետո համապատասխան տիրոջ օրգանիզմն ընկնելով վարակում են

նրան։ Օրինակ՝ ոչխարի դիկտիոնառվուս թոքածիճուն, հեմոնխուսա կոչվող շրդանի ճիճուն և ուզիշ շատերը զարգանում են ուղղակի ձանապարհով։

Հելմինթների մյուս խոպմբն իր թրթուրային շրջանն անց է կացնում մի ուզիշ կենդանու օրգանիզմում։ Այս դեպքում պարագիտային ճիճունի ձուն կամ թրթուրն արտաքին միջավայրում իր զարգացումը շարունակելու համար պահանջում է ուզիշ կենդանու օրգանիզմ, որտեղ թրթուրները զարգանալով վարակիչ (ինվազիոն) աստիճանի են հասնում։ Այն կենդանին, որի օրգանիզմում պարագիտն իր թրթուրային շրջանն է անցկացնում, կոչվում է միջնորդ տեր։ Միջնորդ տիրոջ օրգանիզմում վարակիչ աստիճանի հասած թրթուրը, եթե համապատասխան վերջնական (դեֆինիտիվ) տիրոջ օրգանիզմն ընկնի, այնտեղ նա իր զարգացումը շարունակելով՝ կարող է սեռահասուն պարագիտ դառնալ։ Օրինակ՝ ֆասցիուն (քյափանակը) զարգանում է միջնորդ տիրոջ մասնակցությամբ, այն է՝ լճակային փոքր խխոնչի մեջ։

Իրենց տիրոջ օրգանիզմում ապրելով՝ հելմինթները զանազան հիվանդագին երևույթներ են առաջ բերում։ Նրանց առաջացրած հիվանդություններն էլ ընդհանուր անվամբ կոչվում են հելմինթոզներ կամ ճիճվային հիվանդություններ։ Հելմինթները կարող են իրենց տիրոջ բոլոր օրգաններում էլ մակարուծվել, սակայն ավելի շատ նրանք հանդիպում են մարսողական խողովակում, լյարդում, թոքերում, ուղեղում, սակայ դեպքերում նաև այլ օրգաններում և հյուսվածքներում։

Նրանց քանակությունը կարող է մի քանի հատից մինչև տասնյակ հազարների հասնել։ Մակարուծվելով իրենց տիրոջ օրգանիզմում, նրանք իրենց կենսագործունեության շնորհիվ զանազան նյութեր (տոքսիններ) են արտադրում, որոնք տիրոջ օրգանիզմի վրա թունավոր ազդեցություն են թողնում։ Կան հելմինթներ, որոնք որոշ տեսակի տոքսիններ են արտադրում։ Եթե պարագիտային ճիճունները ապրում են կենսական նշանակություն ունեցող օրգանում, ապա նրանց ազդեցությունը՝ կենդանու վրա ավելի ուժեղ է լինում և ծանր հիվանդություն է առաջացնում։ Տարբեր տեսակի հելմինթների առաջացրած հիվանդության բնույթն ու սաստիպիցյան աստիճանը տարբեր է։

Այսպիսով, հելմինթների պատճառած հիվանդագին երևույթ-

ների աստիճանը պայմանավորվում է կենդանու օրգանիզմում եղած ճիճուների քանակով, ախտահարված օրգանով, նրանց արտադրած նյութերի (առքախնների) բնույթով և մյուս կողմից էլ տիրոջ օրգանիզմի գիմադրողականությամբ ու ընդհանուր դրույթամբ:

Գյուղատնտեսական կենդանիների ճիճվային հիվանդությունների ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ ոչխարները, համեմատած մյուս տեսակի կենդանիների հետ, ավելի հաճախ են վարակվում պարագիտային ճիճուներով:

Ոչխարները հելմինթներով վարակվում են գլխավորապես արոտավայրերում, սակայն պետք է նշել, որ ոչխարների կյանքում շատ այնպիսի պայմաններ կան, որոնք մեծապես նպաստում են նրանց վարակմանը ճիճուներով։ Շատ գեպքերում արոտավայրերն անկազմակերպ են օգտագործվում։ Ոչխարները արոտային ամբողջ շրջանը սովորաբար միևնույն արոտամասում են անցկացնում։ Նման պայմաններում կենդանիների արտաթրութանքի հետ արտաքին միջավայր դուրս եկած ձվերը վարակում են արոտավայրը և այն հետագա վարակի աղբյուր դարձնում։

Ոչխարներն արածելիս սովորաբար պոկում են գետնին մոտ գտնվող խոտերի նույրը տերևներն ու ցողունները, իսկ վերջինների վրա վարակիչ աստիճանի հասած թրթուրների քանակությունը վարակված արոտավայրերում ավելի է լինում։

Այդպիսի գեպքերում ոչխարների համար հելմինթներով վարակվելու հնարավորությունն ակներև է։

Հաճախ ոչխարները արոտավայրերում ստիպված են լինում խմել դանդաղահոս առուների, ջրափոսերից տղմուտների, ճահճուտների, ջրհորների մոտերքում լճացած ջրերից, անձրևներից դոյցած լճակների ջրերից։

Այդպիսի տեղերում ճիճուների ձվերն ու թրթուրներն իրենց հետագա զարգացման համար պայմաններ են գոնում և շուտով հասնում վարակիչ աստիճանի։

Պարագիտային ճիճուները բաժանվում են երեք դասի՝ 1) Տրեմատոզներ՝ ծծաններ, 2) Ցեստոզներ՝ երիզորդեր և 3) Նեմատոզներ՝ կլոր ճիճուներ։ Այս դրույմ մենք կանգ կառնենք այդ ճիճուներից նրանց վրա, որոնք ոչխարների և այծերի մեջ շատ հաճախ են հանդիպում և ծանր հիվանդություններ առաջ բերում։

ՃԻԺՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ

ՎՆԱՍՆԵՐԸ

Ճիժվային հիվանդությունները ոչխարաբուծական տնտեսություններին հսկայական վնաս կարող են պատճառել: Բացի այն, որ հելմինթոզների պատճառով մեծ քանակությամբ անասունների մահացություն է տեղի ունենում, պակասում է նաև նրանց քաշը, մթերատվությունը և կաթնատվությունը, ընկնում է բրդի և մոխորակը:

Ակադեմիկոս Կ. Ի. Սկրյաբինը հելմինթոզների առաջացրած տնտեսական վնասները նկարագրելով ասում է, որ պարագիտային ճիճուններից ոչխարաբուծությանը հասնող վնասը գոյանում է հետևյալից՝

1. Ճիժվային հիվանդությունը ոչխարների համաճարակային, տեղաճարակային և մահացության առանձին դեպքեր է առաջ բերում:

2. Մսի անասնաբուժական հետազոտման ժամանակ ճիժվային հիվանդությունը հարկադրում է խոտանել թե՛ ամբողջ մսեղիքը, թե՛ առանձին օրդանները:

3. Ճիժվային հիվանդությունը ազդում է ոչխարների տնտեսական արժեքի վրա, անդրադառնալով նրանց զուտեխնիկական շահագործման բոլոր կողմերի վրա:

Այստեղ մենք հազիվ նկատելի, նույնիսկ աննկատելի ազգեցություններից սկսած մինչև կենդանիներին հաշմանդամության հասցնող ազդեցություններ ունենք: Ճիճունների հիվանդագին ազդեցությունը, մասնավորապես երկարատև ինտոքսիկացիան (ինքնաթունավորումը) անդրադառնում է բնախոսական նորմալ լարվածության վրա, որի հետևանքով կարող են տեղի ունենալ հետևյալ երեսությունները.

ա) նորմալ աճի և առհասարակ կենդանիների ֆիզիկական զարգացման ուշացում.

բ) բրդի աճի դանդաղում և դրանով իսկ նրա որակի և քանակի իշեցում.

գ) կաթնատվության նվազում:

Ոչխարաբուծովթյան համար հատկապես կարևոր հարց է հանդիսանում ճիճվային գործոնի ազդեցությունը բրդի վրա:

4. Ճիճվային հիվանդություններն օժանդակում են վարակիչ պրոցեսների առաջանալում, համաձայն՝ «ճիճվային հիվանդությունը վարակի համար դարպասներ է բացում» սկզբունքին:

5. Սպառելով օրգանիզմի ինքնապաշտպանական ուժերը, ճիճվային հիվանդությունը կենդանիներին զգայուն է դարձնում զանազան հիվանդություններ առաջացնող բազմատեսակ ազդակների նկատմամբ:

6. Ճիճվային հիվանդությունն ազդում է վարակիչ և պրոտոցոյ շատ հիվանդությունների նորմալ ընթացքի վրա, ինչպես նաև ավելացնում է այդ հիվանդությունների ժամանակ առաջացող բարդությունները:

Այսպիսի համառոտ ամփոփումից հետո միանգամայն պարզ է դառնում ճիճվային հիվանդությունների դեմ անողոք պայքար կազմակերպելու անհրաժեշտությունը:

Սակայն ճիճվային հիվանդությունների դեմ կիրառվող միակողմանի միջոցառումները չեն կարող հաջողության հասցնել: Դրա համար անհրաժեշտ է պլանային և սիստեմատիկ պայքար կազմակերպել, անապահով տնտեսություններում:

Միջոցառումները՝ պետք է նպատակ ունենան մի կողմից բուժելու հիվանդ կենդանիներին, իսկ մյուս կողմից՝ կանխելու առողջ կենդանիների վարակումը:

Պետք է ամեն կերպ աշխատել, որ կենդանիների բուժական մշակումների, նրանց խնամքի, պահպանման և կերակրման գործը, պրոֆիլակտիկ միջոցառումների կիրառումը, ինչպես օրինակ՝ արոտավայրերի, ջրելատեղերի, ոչխարանոցների բարեկարգումն է, կատարվեն գիտական հիմունքներով: Դա հնարավորություն կտա արտակ կերպով վերացնելու կենդանիների հելմինթոզները և սոցիալիստական անտառնապահությունից ստանալու առավելագույն արտադրանք, ինչպես այդ ցուց տվեց մեր մի շարք շրջանների առաջանակ կոլխոզների ու սովորողների փորձը, որոնք արդեն վերացրել են ոչխարաների ճիճվային հիվանդությունները:

Մենք պետք է ճիճվային հիվանդությունների դեմ ուղղված պլանային միջոցառումները հետևողականորեն կիրառելու միջոցով անցնենք պարագիտային ճիճումներին իսպառ վերացնելու գործին:

1. ՈՉԽԵՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ՖԱՍԹԻՈԼՈԶ ԼՅԱՐԴԱՁԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ (ՔՅԱՓԱՆԱԿ)

Ֆասցիոլոզը կամ քյափանակը կենդանիների լյարդաձիճվա-
լին հիվանդություն է, որն առաջանում է ֆասցիոլա կոչվող ճիճու-
ների շնորհիվ: Այս հիվանդությամբ տառապում են գլխավորապես
ոչխարները, այծերը և խոշոր եղջերավոր անասունները, սակայ-
նեպքերում նաև մյուս կենդանիները: Այ մարդիկ:

Մինչև վերջին 15—20 տարիները ոչխարաբուժական տնտե-
սություններում ամենավտանգավորն ու կորստարին այս հիվան-
դությունն էր համարվում: Նա տարածված է բոլոր երկրներում:
Ֆասցիոլոզի անապահով վայրերում եղել են այնպիսի տարիներ,
երբ կոտորվել են բոլոր ոչխարները: Այդ հիվանդության կորատա-
բեր լինելու աստիճանը ցուցը տալու համար եղած բազմաթիվ
տվյալներից բերում ենք մի քանիսը:

Գերմանիայի մի շարք շրջաններում ֆասցիոլոզը խիստ տա-
րածված է: 1400 ոչխարից բաղկացած մի հոտում կոտորվել են
բոլորը, բացի 6-ից: Մի որիշ հոտում 1200 ոչխարից ազատվել են
միայն 25 ոչխար: Ֆրանսիայի մի շարք շրջաններում 1910 և 1912
թվերին ֆասցիոլոզի պատճառով կոտորվել են ոչխարների 50—
100%: Անգլիայում այդ հիվանդությունը ամեն տարի մեկ միլիոն
ոչխարի կորստի պատճառ է դառնում: 1924 թ. եվրոպայի մի քա-
նի երկրներում ֆասցիոլոզի համաճարակ է եղել: Միայն Բավա-
րիայում կոտորվել են 17—18 հազար խոշոր եղջերավոր անա-
սուն, 50—60 հազար ոչխար և 2500 այծ:

Ֆասցիոլոզը տարածված է գլխավորապես այնպիսի վայրե-
րում, որոնք խոնավ են, ճահճուտ կամ հեղեղումների ենթակա:
Այդպիսի վայրերում ֆասցիոլոզի համաճարակները մշտական
երևույթ են, որովհետև ֆասցիոլոզի պարապիտի զարգացման
համար նպաստավոր պայմաններ կան:

Ֆասցիոլոզից անասնապահությանը հասնող վնասը միայն մա-
հացությամբ չի սահմանափակվում: Այդ հիվանդության ժամանակ
կենդանիները հյուծվում են, նրանց քաշը պակասում է և նրանք
կարող են դառնալ վարակի տարածման աղբյուրի: Հիվանդության
խրոնիկ (երկարատև) ընթացքի ժամանակ հիվանդ կենդանիների
կաթնատվությունն ընկնում է 10—20% և նույնիսկ ավելի: Բրդի-

մթերատվովթյունը և որակը ցածրանում է, մատղաշները վատ են աճում և դժվար գիրանում:


Բացի այս բոլորից, ֆասցիոլոզով տառապող կենդանիները թուլանալով և հյուծվելով կորցնում են իրենց օրգանիզմի ինքնապաշտպանական ուժերը, որի հետևանքով նրանք կարող են հետությամբ ախտահարվել զանազան հիվանդություններով:

ՖԱՍԻՈԼԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆասցիոլոզ լյարդաճիճվային հիվանդության հարուցիչները լյարդային ֆասցիոլա և հսկա ֆասցիոլա (գիգանտիկա) կոչվող պարագիտային ճիճուներն են, որոնք միմյանցից տարբերվում են միայն արտաքին տեսքով և մեծությամբ: Նրանց կենսակերպը համարյա միատեսակ է: Ֆասցիոլաները դասվում են տրեմատոդների դասին: Լյարդային ֆասցիոլան տերեւի նման է, տափակ, 2—3 սմ երկարություն և մոտ մեկ սմ լայնություն ունեցող մի պարագիտ:

Եթե ֆասցիոլային դնենք երկու առարկայական ապակիների միջև և միկրոսկոպով (մանրագիտակով) նայենք, ապա կտեսնենք, որ նրա մարմինը պատաժ է փշիկներով ծածկված մաշկաթաղանթով: Նա իր մարմնի առջևի մասում ունի երկու ծծիչ, որոնցից առաջինը կոչվում է բերնի, իսկ երկրորդը՝ որովայնի ծծիչ: Բերնի ծծիչի շարունակությունն են կազմում պարագիտի ըսպանը և կերակրափողը, որը հետո բաժանվում է երկու աղիքի: Վերջինները ձգվում են պարագիտի երկու կողմերով և իրենցից բազմաթիվ ճյուղավորումներ են տալիս, որոնք փակ (կուլը) են վերջանում: Նյութերի փոխանակության հետևանքով առաջացած ավելորդ նյութերը հեռացնելու համար ֆասցիոլան մարմնի հետին մասում ունի արտաթրորիչ անցք:

Ֆասցիոլաների սեռական օրգանները շատ բարդ կառուցվածք ունեն: Այդ պարագիտները երկսեռ են (հերմաֆրոդիտ): Ամեն մի ֆասցիոլա ունի թե՛ արական, և թե՛ իգական սեռական օրգաններ: և դրա շնորհիվ ընդունակ է ինքնաբեղմնավորման: Սեռական օրգանների վերջավորությունները գտնվում են բերնի և փորի ծծիչների միջև: Այստեղ է գտնվում նաև արգանդը, որը սովորաբար լցված է բազմաթիվ ձվերով:



Նկ. 1. Լյարդային ֆասցիոլա:

Սեռահասուն ֆասցիոլաներն ապրում են լյարդի լեղածորան-ներում և սնվում են լեզով:

Հակա ֆասցիոլան սովորական լյարդային ֆասցիոլայից տարբերվում է իր մեծությամբ և մարմնի երկայնաձիգ ձևով: Նրա երկարությունը կարող է հասնել մինչև 5—5,7 սմ-ի իսկ լայնությունը՝ 1 սմ-ի:

ՖԱՍՑԻՈԼԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

Ապրելով լյարդի լեղածորաններում, ֆասցիոլաները մեծ քանակությամբ ձվեր են դնում, որոնք լեզու հետ դուրս են գալիս 12-մատոյա աղիքը և խառնվելով նրա մեջ գտնված սննդանյութերին անցնում՝ աղիքների մյուս բաժինները և, վերջապես, կըղկըզանքի հետ դուրս են գալիս արտաքին միջավայր: Գիտնական և լեյկարտը, որն ապացուցել է ֆասցիոլայի զարգացման շրջանա-


ոռվթյունը, հաշվել է, որ ամեն մի ֆասցիոլա իր կյանքի ընթացքում միջին թվով մոտ 37 հազար ձու է արտադրում:

Արտաքին միջավայր դուրս եկած ձվերը հետագա զարգացման համար պահանջում են որոշ պայմաններ, այն է՝ խոնավություն (ճահճ, լճակ, ճահճացած մարգագետին), 100—360 չերմություն, լուս և այլն: Նայած շրջապատի ջերմությանը և այլ պայմանների առկայությանը՝ 3—6 շաբաթվա ընթացքում ձվից թարթիչավոր թրթուր է դուրս գալիս, որ կոչվում է Միրացիդի: Միրացիդին կարող է ապրել խոնավ տեղերում, ճահճիններում և իր թարթիչների շնորհիվ ջրում լողալ: Միրացիդին անասուն վարակել չի կարող: Նա պետք է իր զարգացումը շարունակի միջնորդ տիրոջ օրգանիզմում, որպիսին հանդիսանում են լճակային փոքր խխունջները: Այդ խխունջներն ապրում են կանգնած ջրերում, ճահճիններում, լճակներում, տղմուտներում: Եթե Միրացիդին ջրի մեջ լողալիս հանդիպում է այդ խխունջին, ակտիվ կերպով մտնում է նրա մարմնի մեջ և հասնում է լյարդին: Խխունջի լյարդում միրացիդիները թարթիչներով ծածկված իրենց շապիկից դուրս են գալիս և մոտ երկու շաբաթվա ընթացքում անցնում՝ զարգացման երկրորդ շրջանը: Այդ շրջանում թրթուրը նմանվում է պարկի և կոչվում է սպորոցիստա: Սպորոցիստայից նոր տիպի թրթուրներ են աճում, որոնք կոչվում են ոեղի: Ամեն մի սպորոցիստայից զարգանում է, 5—8 ոեղի:

Եկեղիները բազմանալով նորից ոեղիներ կամ՝ ցերկարիներ են տանիս: Ցերկարիներն ունեն երկու ծծիչ և պոչ: Ամեն մի ոեղի բազմանալով կարող է տալ մինչև 20 ցերկարի: Այսպիսով, ֆասցիոլայի մի ձվից կարող է մոտավորապես 80—150 ցերկարի ստացվել: Ցերկարիները խխունջի մարմնից դուրս են գալիս և իրենց պոչի շնորհիվ կարող են ջրում լողալ: Հետագային նրանց պոչը կտրվում է, որից հետո իրենցից մածոցիկ թաղանթ են արտադրում և մնում նրա մեջ: Այդ աստիճանի թրթուրը կոչվում է աղոլեսկարի, որը կարող է ջրի երեսին մնալ կամ կպչել խոտերի ցողուններին կամ այլ առարկաների:

Ցերկարին և աղոլեսկարին ֆասցիոլայի վերջնական տիրոջ համար վարակիչ են:

Արտավայրերում կամ ջրելատեղերում անասուններն արածելիս կամ ջուր խմելիս կարող են ցերկարիներ և աղոլեսկարիներ



Նկ. 2. Ֆասցիոլայի զարգացման շրջանառությունը:

Կու տալ: Ստամոքսում և աղիքներում վերջիններս ազատվում են իրենց թաղանթից և այնտեղից անցնում լարդի լեղածորանները, որտեղ դառնում են սեռահասուն ֆասցիոլաներ և արդեն կարող են ծու արտադրել:

Սղոլեսկարիներն ու ցերկարիները հետևյալ ճանապարհով են լարդի լեղածորաններն անցնում: Նրանք աղիքի պատը ճեղքում են և մտնում երակի մեջ, որտեղից արյան հոսանքով հասնում լարդի մազանոթները: Այստեղ նրանք դարձյալ ճեղքում են մազանոթների պատերը և մտնում լեղածորանների մեջ, որտեղ և սեռահասուն

Հն դառնում: Մինչև աղոլեսկարին դառնում է սեռահասուն ֆաստիոլա, անցնում է 2—3 ամիս:

Ֆաստիոլաների կյանքի տևողությունը լյարդում 3—5 տարի են հաշվում:

Մի քանի հետազոտողնել գտնում են, որ աղոլեսկարիներն աղիքից ուրիշ ճանապարհով են լյարդն անցնում: Նրանց կարծիքով աղոլեսկարիները աղիքի պատը ծակում են և անցնում որովայնի խոռոշը և հետո լյարդը պատող պատյանից անցնում լեղածորանները: Մյուսները գտնում են, որ ֆաստիոլաները լյարդն անցնում լեղատար խողովակով:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ կենդանիները ֆաստիուզով վարակվում են միայն քաղցրահամ ջրերում ապրող լճակային փոքր խխունչի մարմնում զանազան կերպարանափոխումների ենթարկված ֆաստիոլայի թրթուրներով, իսկ պարագիտի ձվեր կուլ տալով նրանք վարակվել շեն կարող:

ՖԱՍՏԻՈԼՈԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Լյարդի լեղածորաններում բնակություն հաստատած ֆաստիոլաների ազդեցությունը կենդանու օրգանիզմի վրա ընդհանուր առմամբ կայանում է՝ 1) պարագիտների մեխանիկական ներգործության, 2) քիմիական գրգիռների և 3) միկրոբներ փոխանցելու մեջ:

Մեխանիկական ներգործությունը կայանում է հետևյալում՝ մատղաշ ֆաստիոլաները լեղածորաններն անցնելու ժամանակի վիրավորում են արյան մազանոթների պատերը, որի հետևանքով լարվում կարող են արյունազեղումներ առաջանալ: Բացի դրանից, լյարդն ուղղում և բորբոքվում է: Հետագայում, ֆաստիոլաները լեղածորաններում շարժվելիս իրենց մաշկաթաղանթի վրայի բազմաթիվ փշիկներով գրգռում են նրանց պատերը, որի պատճառով վերջինները բորբոքվում են և հետագայում կրային աղերի կուտակման հետևանքով կարծրանում:

Հաճախ, այդ պարագիտները մանր լեղածորաններով անցնելիս ձեղքում են նրանց պատերը և այդպիսով արյունազեղումների ու լյարդի բջիջների քայլայման պատճառ դառնում: Երբեմն, նրանք լեղածորանները փակում-խցանում են և լեղին դուրս հոսել հկա-

րողանալով կանգ է առնում նրանց մեջ: Հետագայում լեզին ներծվում է և մի շարք հիվանդագիրն երևույթների պատճառ է դառնում, մանավանդ որ հիվանդությունը երկարատև է լինում (դեղնություն, լեզածորանների լայնացում և այլն):

Ֆասցիոլաների առաջացրած քիմիական գրգիռները հետևանք են այն բանի, որ պարագիտները իրենց կենսագործունեության շնորհիվ թունավոր նյութեր (տոքսիններ) են արտադրում, որոնք ոչ միայն լարդի, այլև արյան մեջ ծծվելով ազդում են կենդանու ամբողջ օրգանիզմի վրա և շարունակ թունավորում են նրան:

Բացի այս բոլորից, ֆասցիոլաներն աղիքից լարդն անցնելու ժամանակ կարող են իրենց հետ միաժամանակ զանազան միկրոբներ փոխանցել, որոնք կարող են բարենպաստ պայմաններ դանել իրենց զարգացման համար:

Լյարդն անցած միկրոբները կարող են այնտեղ թարախային պրոցեսներ առաջացնել և այդպիսով բարդացնել ֆասցիոլոզի ընթացքը:

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆասցիոլոզի ժամանակ ախտաբանական փոփոխությունների աստիճանը կախված է լարդում գտնվող պարագիտների քանակից: Եթե ֆասցիոլաների թիվն աննշան է, այդ դեպքում էական փոփոխություններ չեն նկատվում, լեզածորանները մի քիչ ուռչում են և նրանց պատերը հաստանում են:

Խորնիկ և սաստիկ ֆասցիոլոզի դեպքում լարդը խիստ մեծանում է և պնդանում: Լեզածորանները նման են սպիտակավուն հաստ խողովակների և աչքի են ընկնում: Նրանց պատերը կրաքին աղերի կուտակման պատճառով կարծր են և հաստացած: Եթե այդպիսի լեզածորանը կտրենք, ապա կտեսնենք դեղնագորշ լեզին և նրա մեջ գտնվող ֆասցիոլաներին: Լյարդն այլասերման վիճակումն է լինում, եթե նրա կտրվածքը կավի կույնն է հիշեցնում:

Բացի լարդի փոփոխություններից, կենդանու ամբողջ օրգանիզմն ընդհանրապես հյուծված է լինում, նկատվում են ջրհավաքներ և այտուցներ որովայնում, կրծքի խոռոշում, ենթածնոտային և կրծքի հատվածներում:



Նկ. 3. Փասցիոլոգով ախտահարված ոչխարի լլարդը:

ՖԱՍՑԻՈԼՈԶԻ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ՆՇԱՆԵՐԸ

Ֆասցիոլոզի ընթացքը մեծ մասամբ խրոնիկ (երկարատև) է լինում: Հիվանդության զարգացումը կատարվում է աստիճանաբար, որի շնորհիվ նրա սկզբնական շրջանը հաճախ աննկատելի է, որովհետև հիվանդության նշանները պարզ չեն: Սկզբնական շրջանում նկատվում է ոչխարների որոշ թուլություն, թմրածություն և երբեմն վատ ախորժակ:

Հիվանդության զարգացման հետ միասին առաջ է գալիս նիշարություն, սակավարյունություն, ջրարյունություն (հիդրեմիա) և ընդհանուր հյուծում: Լորձաթաղանթները գունատվում են, որ առանձնապես նկատելի է աշքերի լորձաթաղանթի վրա: Բացի սակավարյունությունից նկատելի են այտուցներ, մասնավորապես աշքի կոպերում, ներքին ծնոտի, կրծքի ու փորի տակ: Թմրածությունն ու թուլությունը գնալով ավելի են աշքի ընկնում, իսկ ախորժակն ու որոճը պակասում են, բուրդը չորանում է և հեշտու-

թյամբ է պոկվում, իսկ տեղ-տեղ էլ ինքն իրեն թափվում է: Այդ ժամանակ որովայնի կրծքի խոռոշներում ջրհավաք է տեղի ունենում: Այս բոլորը զարգանում է հիվանդության երկրորդ ամսում:

Հիվանդության երրորդ ամսում այդ երևութները ավելի ցայտուն են դառնում (ջրհավաքներ, այտուցներ, հյուծվածություն և այլն): Հետագայում նկատվում է նաև փորլուծ: Կաթը ջրիկ և պակաս սննդարար է դառնում, որի պատճառով գառները չեն կշտանում, լավ չեն աճում և հյուծվում են: Հիվանդ ոչխարները երբեմն վիժուալ են, կամ նրանցից ծնված գառները թույլ և անկենսունակ են լինում: Ֆասցիոլոզով հիվանդ ոչխարների զարկերակը և շնչառությունը մեծ մասամբ նորմալ են: Որոշ գեղքերում չերմությունը կարող է նորմայից մի քիչ բարձրանալ (40° և ավելի): Հիվանդ կենդանիները հետզհետե հյուծվելով մահանում են: Ավելի ուժեղ և գեր կենդանիներն աստիճանաբար սկսում են կազդուրվելու դա տեղի է ունենում գարնանը, արոտ դուրս գալուց հետո, սակայն այդպիսի կենդանիները ֆասցիոլոզից բոլորովին չեն ազատվում:

Ոչխարների ֆասցիոլոզով վարակումը տեղի է ունենում գիսավորապես ամառվա վերջին և աշնան ամիսներին:

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ


Ֆասցիոլոզն ախտորոշելիս չեն կարելի բավարարվել միայն հիվանդության արտաքին նշաններով, որովհետև նման նշաններ նկատվում են նաև ուրիշ հելմինթոզների ժամանակ: Ճիշտ ախտորոշում կատարվում է մահացած կենդանիների դիահերձումով կամ հիվանդ կենդանին մորթելով, եթե համապատասխան ախտաբանական նշաններ են, որ գլխավորն է, լեղածորաններում ֆասցիոլաներ հայտնաբերվեն: Եթե լյարդում միաժամանակ համապատասխան ախտաբանական փոփոխումներ և մեծ քանակությամբ ֆասցիոլաներ հայտնաբերվեն, ապա ախտորոշումը պետք է համարել վճռված, և այդ ապացույց է, որ տվյալ հոտի ոչխարների մեջ ֆասցիոլոզ կա:

Ֆասցիոլոզով հիվանդ կենդանու կղկղանքի հետ միասին, ինչպես վերը հիշվեց, ֆասցիոլաների ձևեր են արտաթորվում, որոնց

Ճիւայն միկրոսկոպով կարելի է տեսնել: Նրանց հայտնաբերելու համար կարելի է լաբորատոր քննություն կատարել, որի համար պետք է կենդանու ուղիղ աղիքից վերցնել կղկղանքի 5—6 գնդիկ, դնել առափի մեջ, կամ փաթաթել թղթում և ուղարկել լաբորատորիա՝ քննության հնարքելու համար:

Հոտում կենդանիների վարակման աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է լաբորատորիա ուղարկել 50—100 ոչխարի կղկղանք (նայած հոտի ոչխարների քանակին): Յուրաքանչյուր կենդանուց վերցրած կղկղանքը պետք է դնել առանձին տուփի մեջ, կամ փաթաթել առանձին թղթում, որից հետո հարկավոր է լվանալ ձեռքերը և կղկղանքը վերցնել հաջորդ կենդանուց: Այդ նմուշները ուղարկել քննության, նշանակելով տեղի, տնտեսության և հոտի անունը:

Ֆասցիոլոզի նկատմամբ կղկղանքի քննություն կատարելու համար շատ մեթոդներ գույություն ունեն: Պրակտիկ անասնաբուժներին մենք խորհուրդ ենք տալիս կիրառել հասարակ նստվածք ստանալու մեթոդը: Կղկղանքի փորձանմուշը (1—2 գնդիկ) հավանգի մեջ խառնում են ջրի հետ, ապա լցնում կենտրոնաթափի (ցենտրոֆուզի) փորձանոթի մեջ և կենտրոնաթափում՝ 1—2 րոպե, որից հետո վերցնում են փորձանոթը, դուրս են թափում հավաք-



Նկ. 4. Փասցիոլայի ձուն:

ված հեղուկը և նստվածքի վրա նորից ջուլի լցնում ու կրկին կենտրոնաթափում։ Վերևի հեղուկը դարձյալ դուրս են թափում, իսկ նստվածքից առարկայական մեծ ապակու (5×15 սմ) վրա քսուկ պատրաստում ու վերջինս հետազոտում միկրոսկոպի փոքր խոշորացման սիստեմով, ըստորում, յուրաքանչյուր, նմուշից 2—3 քսուկ են հետազոտում։ Եթե քսուկներից որևէ մեկում ֆասցիոլայի ձու հայտնաբերվի, այդ ապացուց է, որ տվյալ կենդանին ֆասցիոլաներով ախտահարված է։ Առանձին կենդանիների ախտահարման աստիճանը պարզելու համար, պետք է հետազոտել 1 գրամ կղղանք և հաշվել հայտնաբերված ձվերի թիվը։

Ֆասցիոլայի ձվերը շատ բնորոշ են, նրանք ձվաձև են, ծածկված են պինդ թաղանթով և մի ծալրում կափարիչ ունեն։ Զվերը մուգ-դեղին կամ ոսկեգույն են։ Նրանց երկարությունը 0,12—0,15 միլիմետր է, իսկ լայնությունը՝ 0,06—0,09 միլիմետր (տես նկ. 4)։

ՖԱՍՑԻՈԼՈԶԻ ՀԱՄԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆասցիոլոզի համաճարակները երևան են գալիս պարբերաբար։ Առանձին համաճարակների մեջ ընկած ժամանակաշրջանում հիվանդությունը՝ մեծ մասամբ խրոնիկ բնույթ է՝ ընդունում և հանդես է գալիս առանձին հիվանդությունների, երբեմն էլ տեղաժարակի ձևով։

Համաճարակների ծագումը, բնույթը, ընթացքը և սկիզբն ու վախճանը հիմնականում կախված են պարագիտի, միջնորդ տիրոջ և արտաքին միջավայրի հատկություններից։ Եթե վերջիններս պարագիտների համար նպաստավոր են, ապա համաճարակը կարող է անարգել զարգանալ։

Ֆասցիոլոզով տառապող կենդանիները, հատկապես որոճողները, իրենց կղղանքի հետ պարագիտի ձվեր են արտադրում և արտաքին միջավայրը վարակում։ Եթե ֆասցիոլաների ձվերն արտաքին միջավայրում հանդիպեն ջրառատ կամ խոնավ պայմանների, 3—6 շաբաթվա ընթացքում նրանցից կարող են դուրս գալ միրացիլիներ (թարթիչավոր թրթուրներ)։ Չոր տեղեր ընկած ձվերի մեծ մասը ոչնչանում է։ Միրացիլիները աղատ վիճակում 1—2

օրից ավելի ապրել չեն կարող: Եթե այն ժամանակամիջոցում նրանք իրենց միջնորդ տերերին՝ լճակային փոքր խխունջներին շհանգիպեն, կոչնշանան: Լճակային փոքր խխունջներն ապրում են զրեթե բոլոր ճահճոտ, ջրառատ և խոնավ վայրերում, որտեղ քաղցրահամ ջրեր կան: Սառնամանիքներին՝ խխունջները լավ են դիմանում, չորության պայմաններին էլ բավական հարմարվում են: Միայն երկարատև երաշտը կարող է նրանց սպանել: Չոր ժամանակ նրանք թմրում, անշարժ (անաբիոզ) դրության մեջ են ընկնում, իսկ անձրևներից հետո կարող են նորից արթնանալ և բազմաթիվ ցերկարիներ արտադրել: Ֆասցիոլա պարագիտի զարգացման համար խոնավությունն առաջնակարգ դեր է խաղում: Անձրևվային տարիներին ֆասցիոլովն ավելի ուժգին է զարգանում և խոշոր կորուստների ու մահացությունների պատճառ դառնում:

Աղոլեսկարիները խոնավ միջավայրում իրենց կենսունակությունը կարող են պահպանել շատ ամիսներ: Ճահճոտ վայրերից հավաքված խոտի մեջ ևս նրանք որոշ ժամանակ պահպանում են իրենց կենսունակությունը: Իսկ չոր եղանակի դեպքում, մանավանդ արեգակի ճառագայթների ազգեցության տակ, նրանք սովորաբար մի քանի օրում ոչնշանում են: Ըստ երևույթին, վարակման տեսակետից ամենամեծ նշանակությունը տրվում է ճահճոտ տեղերին և խոնավ արտավայրերին, որովհետև այդպիսի տեղերում, խոնավ խոտերի մրա, մանավանդ արմատին մոտ մասերում աղութակարիների քանակությունը շատ մեծ է լինում և, ուշադրությամբ նայելիս, նրանց նույնիսկ կարելի է աշքով տեսնել: Աղոլեսկարիները կլոր ձև ունեն և 2—2,5 մմ լայնություն:

ՈՉԽԱՐՆԵՐԻ ՏԱՍՑԻՈԼՈՋԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Ֆասցիոլով դեմ պայքարելու համար գործադրվում են միշտ շարք բուժական և պրոֆիլակտիկ միջոցառումներ: Դրանց նպատակն է պարագիտին ոչնշացնել նրա զարգացման բոլոր ստադիաներում, ինչպես վերջնական տիրոջ օրգանիզմում, այնպես էլ արտաքին միջավայրում և միջնորդ տիրոջ օրգանիզմում:

Վերջնական տերերի օրգանիզմում ֆասցիոլաների ոչնշացումը կատարվում է այդ կենդանիների բուժումով, ալսինքն՝ նրանց ճիճվահանելով, կամ ինչպես ասում են այլ կերպ՝ դեհեմինթիզա-

ցիայի ենթարկելով: Ֆասցիոլոզի բուժման համար մի շարք դեղանյութեր են փորձարկվել, սակայն նրանցից շատերը ցանկալի արդյունք չեն տվել: 1925 թ. հետո գործադրվում է ածխածնի քառարլորատ դեղանյութը, որը բավական լայն կիրառում է ստացել: Այդ դեղը անգույն, ծանր հեղուկ է և յուրահատուկ հոտ ունի: Ոշխարներին և այծերին ածխածնի քառարլորատը՝ տալիս են դոպոզի (ժելատինի) կապտուկների մեջ կամ՝ լորձախառն խաշուկի (օրինակ՝ կտավատի), ձեթի, կաթի և նույնիսկ ջրի հետ խառն՝ շշի կամ շպրիցի միջոցով: Այդ դեղքում ածխածնի քառարլորատի ամեն մի դոզան խառնում են թված հեղուկներից որևէ մեկի հետ և խմացնում: Պետք է զգուցը լինել, որ դեղը շնչառական ուղիները շընկնի, հակառակ դեղքում կենդանին կարող է շնչառել լինել և մահանալ:

Ածխածնի քսարքորատը կարելի է նաև սրսկել կենդանու դանձակի մեջ: Դրա համար վերցնում են 2 կամ 5 գրամանոց շպրից և 5—8 սմ երկարություն ունեցող ասեղ: Սսեղը մտցնում են դանձակի մեջ կենդանու ձախ սովլափոսում և շպրիցով սրսկում կատարում: Բուժման այս ձեղը լավ արդյունք է տալիս: Պետք է զգուշությամբ հետևել, որպեսզի դեղը սրսկի դանձակի մեջ: Ածխածնի քառարլորատը ոչխարներին արվում է հետեւյալ դոզաներով՝ մինչև մեկ տարեկան ոչխարներին և այծերին մեկ խորանարդ սանտիմետր, իսկ ավելի մեծերին՝ 2—3 խոր. սմ:

Ածխածնի քառարքորատը ֆասցիոլաների զգալի մասին շուտով (10—12 ժամում) սպանում է և սովորաբար երեք օրից հետո հիվանդ անասունների լարդում այլևս ֆասցիոլաներ չեն հայտնաբերվում, կամ՝ նրանց թիվը մի քանի հատից շի անցնում:

Սակայն չնայած իր լավ բուժիչ հատկություններին, այս դեղը մասսայական բուժական մշակումների ժամանակ առանձին դեղքերում կարող է բարդություններ առաջացնել որոշ կենդանիների մեջ: Այդ բարդություններն ավելի հաճախ գեր կենդանիների վրա են նկատվում և մի շարք դեղքերում վերջանում են նրանց մահացությամբ: Բարդությունները նկատվում են դեղը տալու առաջին օրը (հաճախ առաջին ժամերին) և երեքմն էլ երկրորդ օրը: Բարդություններից առաջացած մահացությունները կարող են 0,4—7%-ի հասնել: Բացի այդ, դիտողությունները ցույց են տվել, որ մահացության դեղքերն ավելի շատ ձմբան և գարնան ամիսներին

հն նկատվում, իսկ ամառը և աշնանը համարյա չեն նկատվում։ Ածխածնի քառաքլորատից՝ առաջացած բարդությունների դեպքում նկատվում է՝ կերից հրաժարվել, հեռոց, փքանք, բերանի փրփուր և այլն, և եթե օգնություն չհասնի, կարճ ժամանակամիջոցում կենդանին կարող է մահանալ:

Մեր դիտողությանները ցուց են տվել, որ նման բարդությունները զլամավորապես ֆասցիոլոզով սաստիկ ախտահարված կենդանիների վրա են նկատվում, սակայն քիչ չեն եղել և այնպիսի դեպքեր, երբ բարդություններ նկատվել են նաև ֆասցիոլոզով ոչ այնքան խիստ ախտահարված և նույնիսկ ֆասցիոլոզից ազատ կենդանիների վրա։ Ածխածնի քառաքլորատի առաջ բերած բարդությունների դեմ հանձնարարում ենք նախ և առաջ կենդանուն շենքից դուրս բերել մաքուր օդ, որովայնի մասսաժ անել, լուծողական խմացնել և, եթե կենդանու դրությունը ծանր է, 50—100 խոր. ամ արյուն վերցնել։ Մեր դիտողությունների համաձայն, արյուն վերցնելուց կես կամ մեկ ժամ հետո կենդանին արտաքինից այլևս հիվանդության ոչ մի նշան չի արտահայտում։ Եթե օգնությունն ուղանում է, այդ միջոցներն այլևս շեն օգնում և կենդանին կարող է մահանալ։ Սակայն, երբեմն շուտափուզի միջոցները ևս շեն օգնում։ Ածխածնի քառաքլորատով ֆասցիոլոզի դեմ մասսայական դեհելմինթիզացիայի ժամանակ, հղության երկրորդ շրջանում գտնվող ոչխարներից պատահում է, որ վիժում են։

Բարդություններից խուափելու համար, խորհուրդ է տրվում ածխածնի քառաքլորատը տալ մաս-մաս դոզաներով՝ 0,3—0,5-ական խոր. ամ քանակությամբ, մեկ երկու օրվա ընդմիջումով։

ՍՍՌ Միության մեջ ածխածնի քառաքլորատի գործածությունը լայն տարածված է և ամեն տեղ, ուր նա ճիշտ է գործածվել, բավարար բուժական արդյունք է տվել։

Վերջին տասնամյակում ՍՍՌ Միության մեջ (Հայկական ՍՍՌ) խոշոր եղենրազոր անասունների ֆասցիոլոզի բուժման համար լայն գործածություն է ստացել հեխաբլորերան կոչվող դեղանյութը։

Հեքսաքլորեթանը սպիտակ դունի, յուրահատուկ հոտ ունեցող բյուրեղային նյութ է։ Այդ դեղանյութը, թե՛ լաբորատոր պայմաններում, և թե՛ մասսայական բուժական միջոցառումների ժամանակ, ոչխարների և այծերի ֆասցիոլոզի դեպքում, նույնպես շատ

լավ արգյունք է տվել տասնյակ հազարավոր կենդանիների վրա և ստուգողական քննությամբ պարզվել է՝ որ նրանք բուժվել են Այնպիսի հոտերում, որտեղ ֆասցիոլոզը տարածված էր 90—100%, հեքսաքլորեթանով բուժելուց հետո բոլոր հիվանդ անասուններն ազատվել են ֆասցիոլոզից, կամ առանձին՝ կենդանիների լյարդում մնացել են մի քանի կենդանի ֆասցիոլաներ, որպիսի անասունների տոկոսը 2-ից չի անցնում:

Երբեմն, հեքսաքլորեթանով դեհելմինթիզացիա կատարելու ժամանակ, հատկապես ֆասցիոլոզով սաստիկ ախտահարված կենդանիների վրա նույնպես որոշ բարդություններ են նկատվում, սակայն դրանք արտահայտվում են ավելի թիթի ձևով, քան ածխածնի քառաքլորատի գործադրության ժամանակ և սովորաբար անցնում են առանց որևէ միջամտության: Ուրիշ գեպքերում, երբ ոչխարը միայն բնդհանուր թուզություն է արտահայտում (Հոլոց, բերանից փրփուր և ալլն), բավական է մի փոքր մասսաժ կատարել և այդ բարդությունները վերանում են: Ավելի ծանր գեպքերում այդ բարդությունները վերանում են մեր ցուցմունքների համաձայն 50—100 խոր. սմ արյուն վերցնելուց $\frac{1}{2}$ —1 ժամ հետո:

Մինչև այժմ, մի շարք շրջաններում հեքսաքլորեթանով կատարված դեհելմինթիզացիայի հետևանքով տեղի են ունեցել մահացության հազվագյուտ դեպքեր: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ դեհելմինթիզացիայի ենթարկված ոչխարների կամ այծերի մեջ, չնայած նրան, որ նրանք հղիության վերջին շրջանումն են գտնվել, վիժման դեպք չի նկատվել:

Հեքսաքլորեթանի դոզան հաշվում են այսպես՝ յուրաքանչյուր կիլոգրամ կենդանի քաշին 0,2—0,4 գրամ: Միջին թվով յուրաքանչյուր շափառաս ոչխարին կամ այծին տրվում է 8—12 գրամ, իսկ մինչև մեկ տարեկան հասակ ունեցողներին՝ 5—8 գրամ: Հեքսաքլորեթանը տրվում է առանց որևէ խառնուրդի և հետեւալ ձևով. կենդանու գլուխով վեր են բարձրացնում, բաց են անոսմ նրա բերանը և նախօրոք պատրաստած հեքսաքլորեթանի դեղափոշին թղթի վրայից թափում են լեզվի վրա և բերանը ծածկում: Կենդանին իր ներքին ծնոտի և լեզվի շարժումների շնորհիվ դեղանյութը հեշտությամբ կուլ է տալիս:

Ֆասցիոլոզով խիստ ախտահարված տնտեսությունում խոր հուրդ է տրվում հեքսաքլորեթանը գործածել մաս-մաս դոզաներով,

այսինքն՝ յուրաքանչյուր կիլոգրամ կենդանի քաշին 0,1 գրամ, մեկ երկու օրվա ընդմիջումով: Բացի այդ, նման տնտեսություններում հանձնարարվում է 15—20 օրից հետո նորից բուժական մշակումներ կատարել: Հեքսաքլորեթանը ոչխարների և այծերի ֆասցիոլոզի դեմ արդեն լայնորեն կիրառվում է և ավելի լավ արդյունք է տալիս, քան ածխածնի քառաքլորատը:

Հեքսաքլորեթանը կարող է ծառայել որպես միջոց նաև մարդկանց ֆասցիոլոզի բուժման համար:

Սաստիկ ախտահարված երկու հիվանդներ, որոնք մի քանի տարի շարունակ տառապում էին ֆասցիոլոզով, մեր կողմից ենթարկվել են հեքսաքլորեթանով բուժման, որից հետո բոլորովին առողջացել են:

ԴԵԼԵԼՄԻՆԹԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԸ

Ֆասցիոլոզի բուժման ժամանակ կենդանիների լյարդում գտնված ֆասցիոլաները ոչնչանում, քայլքայվում են և լեղատար խողովակով դուրս են դալիս աղիքները, այնուհետև արտաքին միջավայրը: Սակայն նրանք իրենց մեջ պարունակում են մեծ քանակով ձվեր, որոնք անվնաս են մնում: Այդ պատճառով, ֆասցիոլոզի դեմ ճիճվահանում կատարելուց հետո կենդանիներին չի կարելի տանել այնպիսի արոտավայր, որտեղ պարագիտի ձվերը իրենց հետագա զարգացման համար կարող են բարենպաստ պայմաններ գտնել: Դրա համար անհրաժեշտ է բուժման ենթարկված կենդանիներին 5—7 օր պահել գոմում կամ հատուկ աղալում: Այդ ժամանակամիջոցով հավաքված ամբողջ գոմաղբը պետք է վարակագերծման ենթարկել տեղում՝ կուտակելով ինքնայրման համար, ինչպես նկարագրված է ստորև (տես էջ 25):

Ֆասցիոլոզի անապահով տնտեսություններում մասսայական ճիճվահանում կատարելու համար պետք է ստուգել հոտի վարակված կենդանիների տոկոսը: Այն դեպքում, եթե կան կենդանիների մահացության դեպքեր, կամ, եթե ոչխարների կղկղանքի լաբորատոր քննությամբ պարզվել է, որ նրանց 30 % և ավելին ախտահարված են ֆասցիոլոզով, հոտի բոլոր կենդանիները պետք է ենթարկվեն ճիճվահանման:

Իսկ այն դեպքում, եթե լաբորատոր քննությունը ցուց է տա-

լիս, որ ոչխարների 30 տոկոսից պակասն է ախտահարված, պետք է կատարել ընտրովի բուժում, այսինքն՝ ճիճվահանման ենթարկել միայն վարակված կենդանիներին։ Սակայն, նման հոտերը պետք է հատուկ ուշագրովյան առարկա դարձնել և, հետագայում, պարբերաբ ստուգումներ կատարելով պարզել ֆասցիոլոգի տարածման աստիճանը և բուժումը ձեռնարկել ըստ անհրաժեշտության։

ՊՐՈՖԵԼԱԿՏԻԿ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՖԱՍՑԻՈԼՈԳԻ ԴԵՄ

Ֆասցիոլայի կենսաբանությունից երևում է, որ ֆասցիոլոգի համաձարակային շղթացի հիմնական օղակները հետևյալ տարրերն են հանդիսանում։

1. Վերջնական տիրոջ լարդում մակաբուծվող սեռահասուն ֆասցիոլաները.

2. կենդանիների (մեծ մասամբ որոճողների) կղկղանքի հետարտաթորվող ձվերը, կամ՝ ֆասցիոլոգով ախտահարված լարդը, որն իր մեջ մեծ քանակությամբ պարագիտի ձվեր է պարունակում.

3. ձվերից գոյացած միրացիդիները.

4. Ճակացին փոքր խսունջի մարմնում մակաբուծվող սպորոցիստաները, ոեղիները և ցերկարիները.

5. Խխոնցներից գուրս եկած ցերկարիները.

6. Ճահճացած ջրերում գտնվող, կամ բույսերին կպած աղուկարիները։

Ֆասցիոլոգի վարակի հիմնական աղբյուրը ֆասցիոլայի բազմաթիվ վերջնական տերերն են, որոնցից ոչխարները, ապա այժերն ու խոշոր եղջերավոր անասունները առաջին տեղն են գրավում։ Այդ կենդանիների լարդից ֆասցիոլաներին հեռացնելը համարվում է պրոֆիլակտիկ միջոցառումներից ամենակարևորը։ Դրահամարտ անհրաժեշտ է, պլանային դեհելմինթիզացիա անցկացնելիս, տնտեսությունում գտնվող ֆասցիոլոգով ախտահարված կենդանիներին ընդգրկել բուժումով։

Ինչպես վերևում նշված է, պլանային դեհելմինթիզացիա կատարվում է տարեկան առնվազն երկու անգամ՝ գարնանը՝ արոտի դուրս գալուց 2—3 շաբաթ առաջ, և աշնանը՝ մսուրային շրջանն անցնելուց հետո։ Աշնանային դեհելմինթիզացիա կատարելով մենք կանխում ենք ձմեռվա ընթացքում ֆասցիոլոգից առաջացող մա-

հացությունները, իսկ գարնանային դեհելմինթիզացիայի շնորհիվ մեզ հաջողվում է ոչնչացնել լյարդում մնացած պարագիտներին, որոնք աշնանային դեհելմինթիզացիայի ժամանակ փոքրահասակ են եղել և նրանց վրա մեր կողմից գործադրված դեղանյութերը չեն ազդել: Ճենց դրանով կանխվում է արտավայրերի ախտավորումը ֆասցիոլաների ձևերով:

Ֆասցիոլոգով հիվանդ կենդանիների կղկղանքի հետ դուրս եկող ձվերը ոչնչացնելու համար անհրաժեշտ է անապահով տնտեսությունների գոմաղբը, նախքան որպես պարարտանյութ օգտագործելը, ենթարկել սանիտարա-ճիճվաբանական մշակման: Գոմաղբը պետք է փոխադրել հատուկ գոմաղբանց և այնտեղ ենթարկել ինքնայրման, կամ ինչպես ասում են՝ կենսաջերմացին. (բիոթերմիկ) մշակման: Գոմաղբանոցներ պետք է կառուցվեն բուլոր անասնապահական տնտեսություններում, ճանապարհներից, գոմերից, աղալներից, ջրելատեղերից քիչ հեռու, ուր անասուններն ազատ մուտք չունենան: Գոմաղբանոցի տեղը պետք է լինի ճարթառանց թերթությունների և բավականաշափ տարածությամբ, որպեսզի մասուրային շրջանում հավաքվող ամբողջ գոմաղբը հնարավոր լինի տեղավորել: Աթար պատրաստել կարելի է միայն գոմաղբանոցի հողամասում: Գոմաղբանոցի շորս կողմից պետք է խորակուներ փորել, որպեսզի հավաքվող հեղուկները հեռու չտարածվեն: Գոմաղբանոցում գոմաղբը պետք է հավաքել ոչ պակաս քան մեկ խորանարդ մետր կույտերով, որոնք վրայից և կողերից պետք է ծածկել ծղոտով, իսկ հետո՝ մոտ 20—30 սմ հողաշերտով: Այդ դրությամբ գոմաղբակուլտը հարկավոր է թողնել առնվազն երեք շաբաթ, որպիսի ժամանակամիջոցում կույտի մեջ 550—650 ջերմություն է առաջ գալիս, որը ոչնչացնում է ոչ միայն ֆասցիոլաների ձվերը, այլ նաև ուրիշ հելմինթների ձվերն ու թրթուրները:

Սպանդանոցներում ու սպանդավայրերում ֆասցիոլոգով ախտահարված լյարդները չպետք է դուրս գցել, շներին տալ, այլ պետք է խնամքով հավաքել և ուստիիզացիայի ենթարկել, կամ խոր թաղեց:

Խխունջներին ոչնչացնելու համար ամենից լավ միջոցը ճաճիճների չորացնելն է: Մի շարք շրջաններում, ճաճիճների չորացման նպատակով խոշոր աշխատանքներ են ծավալվել և այդ միջոցը իր դրական արդյունքն է տվել:

Խորհուրդ են տալիս ճահճոտ տեղերի լճակային փոքր խխունջ-ներին վերացնելու համար օգտագործել պղնձարջասապի, կրի, կերակրի պղի լուծովյներ: Սակայն այդ միջոցառումները դժվար է կիրառել ընդարձակ տարածությունների մշակման համար: Վերջին տարիների ընթացքում հատուկ փորձեր են կատարվել խխունջներին այդ ձևով ոչնչացնելու գործությամբ, սակայն այդ փորձերը բացասական արդյունք են տվել:

Անաստմներին վարակումից դերծ պահելու համար պետք է արգելել նրանց ճահճոտ տեղերում արածացնելը և զրելը: Այդպիսի վայրերից հավաքած խոտը հարկավոր է մի լավ շորացնել և միայն 4—5 ամիս պահելուց հետո տալ անասուններին: Ոչխարների, ինչպես նաև մյուս կենդանիների ֆասցիոլոզով վարակումը կանխելու համար պետք է արգելել նրանց արածացնելը վարակված արոտավայրերում: Սակայն այդ միջատ չի հաջողվում կիրառել, որովհետև շատ տեղերում արոտավայրերի խոշոր կարիք է զգացվում:

Այդպիսի տնտեսություններում անհրաժեշտ է կիրառել արոտների օգտագործման այնպիսի կարգ, որպեսզի անաստմներն արոտավայրերում վարակիչ պատիճանի հասած թրթուրների, այսինքն՝ աղոլեսկարիների և ցերկարիների հետ շփում չունենան:

Մեզ հայտնի է, որ պարագիտի ձվից վարակիչ թրթուր զարդանալու համար անհրաժեշտ է 60 օր ժամանակ: Գարնանն արոտ դուրս եկած անասունները իրենց կղկղանքի հետ արտադրում են ֆասցիոլայի ձվեր, որոնք 60 օրից հետո կարող են վարակիչ թրթուրներ դառնալ և վարակել կենդանիներին: Այդ պատճառով անհրաժեշտ է անասուններին երկու ամիս միենույն արոտավայրում արածացնելուց հետո փոխադրել մի ուրիշ արոտավայր: Տարեկան 4—5 անգամ (երկու ամսվա ընդմիջումով), արոտավայրը փոխելով կարելի է կանխել ֆասցիոլոզով կենդանիների վարակվելը:

Ֆասցիոլոզը վերացնելու համար, ինչպես տեսնում ենք, շատ միջոցներ կան, որոնց ճշգրիտ կիրառումը մենք կարող ենք այդ վտանգավոր հիվանդությունը խսպառ վերացնել:

2. ՈԶԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅՍԵՐԻ ՄՈՆԻԵԶԻՈԶ (ԵՐԻԶՈՐԴԱՅԻՆ) ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ոչխարների և այծերի բարակ աղիքներում մակաբուծվում են մի շարք պարագիտային երիգորդեր (տափակ ճիճուներ), որոնցից

ամենից հաճախ հանդիպում են մոնիեղիա ցեղի երիզորդերը:

Այդ պարագիտները մեծ մասամբ նկատվում են 1,5 մինչև 8 ամսական գառների և ովերի մոտ և առաջացնում են ծանր հիվանդություն և մահացություն: Զափահաս ոչխարների և այծերի մոտ այս պարագիտները նկատվում են սակավ դեպքերում: Մոնիեղիողով հաճախ տառապում են նաև հորթերը:

Մոնիեղիողը տարածված է բոլոր երկրներում և ոչխարաբուծական տնտեսություններին մեծ վնաս է պատճառում:

Անապահով, տնտեսություններում գառների մեծ մասը հիվանդանում է մոնիեղիողով և մահացությունը գառների մեջ տեղի է ունենում գլխավորապես 2—6 ամսական հասակում: Հիվանդությունը սկսվում է արոտ գնալուց 1,5—2 ամիս հետո: Նա կարող է ձգձգմբ ամբողջ ամառվա ընթացքում, երբեմն էլ աշնանը:

Հիվանդության սուր ընթացքի ժամանակ հիվանդ գառներից շատերը կարող են մահանալ, իսկ կենդանի՝ մնացածները լինում են թուլլ, նիհար, հյուծված և վերջիվերջո դառնում են տնտեսության համար ոչ պիտանի: Այդպիսի գառները հեշտությամբ հնթարկվում են ուրիշ հիվանդությունների, ցրտին չեն դիմանում և շուտով մահանում են:

Սաստիկ ախտահարված տնտեսություններում, որտեղ մոնիեղիողը կրկնվում է ամեն տարի և նրա դեմ պայքար չի մղվում, ոչխարաբուծությունը չի զարգանում և նույնիսկ կորցնում է իր նշանակությունը: Բարեհաջող ընթացքի դեպքում հիվանդ գառները նիհարում են, հիվանդության նշանները թույլ են արտահայտվում և ծանր հետևանքներ չեն թողնում:

ՄՈՆԻԵՂԻՈՂԻ ՀԱՐՈՒՑԻՉԸ

Մոնիեղիողի հարուցիչները անոպլցեֆալիդների ընտանիքի մոնիեղիա ցեղի երիզորդերն են, որոնք մակարուծվում են գառների և ովերի, ոչխարների և այծերի, հորթերի և մյուս որոճող կենդանիների բարակ աղիքներում:

Այդ երիզորդերը ժապավենի ձև ունեն: Նրանց երկարությունը հասնում է 1—5 մետրի: Մոնիեղիաների մարմինը բաղկացած է գլխիկից (սկոլիքս), վզիկից և մեկը մյուսի ետևից շարված բազմաթիվ հողմանքներից (պրոգլոտիդներ): Գլխի վրա կան չորս

Հատ ծծաններ, որոնցով երիզորդը կպշում է աղիքի լորձաթառանթին։ Հետո գալիս է վղիկը, որից նոր հողվածներ են աճում։ Նոր աճող հողվածները իրենցից շուտ աճած հողվածներին ետ են մղում և ալսափիսով պարագիտի վերջում գտնվող հողվածներն ամենից ծերերն են լինում, իսկ վղիկին մոտ գտնվողները՝ ամենից մատղաշները։



Նկ. 5. Մոնիեզիա երիզորդը։


Մոնիեզիանների հողվածները կարճ են ու շատ լայն։ Նրանց երկարությունը 2—3 մմ է, իսկ լայնությունը՝ մինչև 16 մմ։

Յուրաքանչյուր հողվածն իր մեջ պարփակում է մի շարք օրգաններ և կարծես թե մի ինքնուրույն օրգանիզմ լինի։

Մոնիեզիանների սեռական օրգանները շատ բարդ կազմություն։

ունեն: Նրանք մյուս երիզորդերի նման երկսեռ են: Ամեն մի հոգվածն ունի թե՛ արական և թե՛ իգական սեռական օրգան:

Երիզորդի գլխիկին մոտ գտնվող հոգվածներն անսեռ են: Նրանց մեջ սկզբում զարգանում են արական սեռական օրգանները՝ սերմնագեղձերը և նրանց արտածորանները: Այնուհետև սկսում են զարգանալ իգական սեռական օրգանները, որից հետո հոգվածները դառնում են երկսեռ: Այդ ստացիայում, հոգվածի մեջ տեղի է ունենում ինքնաբեղմնավորում, որից հետո արական սեռական օրգանները հետզհետեւ հետաձման են ենթարկվում և նույնիսկ անհետանում են: Հետագայում արգանդում ձվեր են զարգանում: Ամենավերջին հոգվածներում անհետանում են իգական սեռական օրգանները, բացի արգանդից, և այդպիսով վերջիններն իրենցից ներկայացնում են ձվերով լցված մի պարկ: Մոնիեզիաների արգանդը փակ է: Այդ է պատճառը, որ հոգվածներից ձվեր դուրս չեն գալիս: Հասունացած ձվերով լցված հոգվածները պարագիտի հետին մասից պոկվում են և կղկղանքի հետ դուրս են գալիս արտաքին միջավայր: Այնտեղ նրանց պատերը քայլայվում են և ձվերը դուրս են գալիս: Մոնիեզիաների ձվերը շատ փոքր են, նրանց տրամագիծը $0,05-0,06$ մմ է, արտաքին թաղանթը մի քանի շերտից է բաղկացած. ձվի ներսում միկրոսկրափ կարելի է տեսնել տանձի ձևի մի ապարատ, որի մեջ գտնվում է սաղմը, կամ ինչպես անվանում են՝ օնկոսֆերան:



Նկ. 6. Մոնիեզիայի հոգվածը:

Ինչպես մյուս երիգորդերը, այնպես էլ մոնիկղիաները մարտողական օրգանները չունեն: Սննդանյութերը ծծվում են երիգորդի ամբողջ մակերեսով, իսկ սննդառություննից հետո ստացված ավելորդ նյութերը հեռացվում են հատուկ արտաթորիչ անցքերով:

ՄՈՆԻԵԶԻԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԿԵԼՊԸ

Մոնիկղիա երիգորդերի կենսակերպը պարզելու համար գիտնականները բազմաթիվ հետազոտություններ են կատարել: Ավելի քան հիսուն տարի զանազան հետազոտություններ կատարելուց հետո, նրանց շաշողվեց վերջնականապես պարզաբանել այդ գրատապ հարցը: Միայն 1937 թվին, ամերիկացի գիտնական Մտումկարդը մի շարք փորձեր կատարելուց հետո եկավ այն եղբակացության, որ մոնիկղիաների զարգացումը մյուս եթիկորդերի նման տեղի է ունենում միջնորդ տիրոջ մասնակցությամբ, որպիսին հանդիսանում են հողային մանր տղիկները:

Այդ տղիկները տեսանելի են միայն միջրոսկոպով: Նրանք պատկանում են թիրոպլիֆիզների ընտանիքին: Ստուճկարդը այդ տղիկների Գալումնա և Լեպին կոչվող ցեղերի վրա կատարել է հետեւյալ փորձը: Այդ տղիկներին նա կերակրել է մոնիկղիայի ձվերով և նրանց մեջ տեսել ձվերի զարգացրմը մինչև ցխստիցերեկոյիզներ դառնալը: Այնուհետև վարակված տղերով նա կերակրել է գառներին: Գառների աղիքներում աճել են մոնիկղիա պարագիտները: Ստուճկարդի փորձերը վերստուգիկ են ուղիղ հետազոտողների կողմից, որոնք նույնպիսի արդյունք են ստացել:

Հետագայում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ մոնիկղիայի ձվերը զարգանում են նաև օրիբատիզների ցեղի հողային տղիկների մարմնում: Տղիկների մարմնում մինչև ձվերի վարակիչ աստիճանի հասնելը տեսամ է 120-ից մինչև 200 օր:

Տղիկները հողում կարող են ապրել երկար ժամանակ: Վարակված տղիկները հետեւյալ տարում խիստ վտանգավոր են գառների համար, քանի որ նրանց մեջ արդեն վարակիչ թրթուրներ կան: Գառները, ուղերը, ոչխարներն ու այծերը և մյուս որոճողները արածելու ժամանակ նրանց կուլ տալով կարող են վարակվել մոնիկղիողով:

Գառների և ոչխարների բարակ աղիքում վարակիչ թրթուրները 38—40 օրվա ընթացքում դառնում են սեռահասուն երիզորդեր և կարող են հիվանդագին երևույթներ առաջ բերել:

Հողային տղիկները խիստ տարածված են արոտավայրերում: Այդ է պատճառը, որ այն արոտավայրերում, որտեղ նախորդ տարում մոնեղիողով վարակված գառներ են արածել, տվյալ տարում գառները արածելիս նույնպես վարակվում են մոնիեղիողով:

Սովորաբար գառների հատում մոնիեղիողն սկսում է նկատվել արոտավայր գնալուց 40—50 օրից հետո, մայիս, հունիս և հուլիս ամիսների ընթացքում: Աշնան դեմ մոնիեղիողն սկսում է մեղմանալ, իսկ ձմեռը գառների մահացության եղակի դեպքեր են: միայն նկատվում:

ՄՈՆԻԵԶԻՈԶԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գառների աղիքներում մոնիեղիաները հաճախ կուտակվում են մեծ քանակությամբ: Լինում են դեպքեր, երբ մի գառան աղիքներում հայտնաբերվում են մինչև 25—35 երիզորդեր: Այդ պարագիտների աղիքությունը գառների և ուկերի օրգանիզմի վրա արտահայտվում է նախ և առաջ նրանով, որ նրանք մեծ քանակությամբ տոքսիններ են արտադրում, որոնք արյան վրա քայլայիշ աղիքություն են թողնում: Պարագիտներն երբեմն աղիքում կծիկներ են կազմում, որոնք ոչ միայն մարտողությունն են խանգարում, այլև հաճախ փակում են աղիքի լուսանցքը, ծանր ցավեր պատճառում կենդանում:

Մոնիեղիաներն արագ են աճում: Ամեն մի երիզորդ կարող է մեկ օրվա ընթացքում մինչև 8 ամ աճել-երկարել: Հենց այդ է պատճառը, որ նրանք իրենց տիրոջից մեծ քանակությամբ սննդանյութեր են սպառում: Այդ հանդամանքն ավելի է սաստկացնում հիվանդության պրոցեսը:

Մոնիեղիողի արտաքին նշաններն այնքան էլ բնորոշ չեն: Որքան ավելի մեծ է աղիքներում մակարուծվող պարագիտների թիվը, այնքան ավելի սուր են արտահայտվում հիվանդության նշանները: Բնդհակառակը, պարագիտների քիչ քանակության, կամ նրանց փոքրահասակ լինելու դեպքում հիվանդության նշաններն աննկատելի են: Այդպիսի դեպքերում, գառներն աստիճանաբար

Ֆի՞ճարում են, նրանց մարսողությունը խանգարվում է (առաջանում է, փորձուծ կամ փորկապություն) և կղկղանքի հետ երիզորդի հոդվածներ են արտաթորպում:

Երբեմն, հիվանդության ընթացքն անսպասելի կերպով բարդանում է և այն գառները, որոնք մինչ այդ իրենց լավ էին զգում, հրաժարվում են կերից և հազիվ են կարողանում կանգնել ոտքերի վրա:

Սովորաբար հիվանդությունը զարգանում է աստիճանաբար; Վարակված գառների աճը դանդաղում է, մարսողությունը խանգարվում է, հետո նրանք թուլանում են, հոտից ետ մնում, շուտ-շուտ պառկում և այլն:

Մոնիեզիաների արտադրած տոքսինները ծծվելով արյան մեջ, ո՛չ միայն սակավարյունություն, այլև հաճախ ներվային երկութեներ են առաջ բերում: Հիվանդ գառները աննպատակ շարժումներ են առնում, գլուխը դեպի ետ տանում, երբեմն շրջապտույտ գալիս և այլն: Այն գեպքրամ, երբ պարագիտների թիվը մեծ է, կենդանու աղիքի լուսանցքը փակվում-խցանվում է: Դրանից առաջանում են գազեր, փրանք, փորացավ և նույնիսկ մահ:

Գառների մահացության գլխավոր պատճառը պարագիտների արտադրած տոքսիններով թունավորվելն է (ինտոքսիկացիան):

Հիվանդ գառների կղկղանքը հեղումկանում է և դառնում կանչավուն. նրա մեջ կարելի է հայտնաբերել ո՛չ միայն պարագիտի առանձին հոդվածներ, այլև ամբողջ կտորներ: Մանր հիվանդ դառները հոտից ետ մնալով կորցնում են իրենց մայրերին, երկար կանգնում են և անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի իրենց շրջապատը: Նրանք բոլորովին թուլանալով պառկում են և այլևս չեն կարողանում վեր կենալ տեղից ու մահանում են:

ՄՈՆԻԵԶԻՈԶԻ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Մոնիեզիոզից մահացած գառների դիակները մեծ մասամբ չինար են, բուրդը գզգզված, հետին թասերը և ետևի ոտքերը կղկղանքով կեղտոտված: Տեսանելի լորձաթաղանթները գոմատված են:

Ներքին օրգանների դիակներձման ժամանակ աշքի ընկնող փոփոխություններ չեն հայտնաբերվում: Միայն բարակ աղիքը լցված

Հ լինում մեծ քանակությամբ մոնիեղիա երիզորդերով։ Աղիքների չորձաթաղանթի վրա տեղ-տեղ արյունագեղումներ և բորբոքում է նկատվում։

Երբեմն մոնիեղիողի հետ միաժամանակ գառները վարակված են լինում նաև դիկտիոնապող թոքածճվային և հեմոնխող շրջանի ճիշճային հիվանդություններով։ Այդիսի դեպքերում գառների հիվանդանալու և մահվան պատճառը կարող են հանդիսանալ կամ բոլոր հայտնաբերված հելմինթոզները միասին, կամ այն հելմինթողը, որն ավելի սաստիկ է արտահայտված։

Սաստիկ ախտահարված լինելու դեպքում՝ աղիքի ամբողջ պարագաները միայն մոնիեղիաներն են կազմում։ Երբեմն էլ դիահերձման ժամանակ մոնիեղիաներ հայտնաբերվում են քիչ քանակությամբ, որոնք թեպետ կենդանու մահվան պատճառ չեն հանդիսանում, սակայն այլ պատճառներին զուգընթաց նպաստում են նրան։

ՄՈՆԻԵՂԻՈՂԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ

Մոնիեղիողի ախտորոշման ժամանակ անհրաժեշտ է պարզել հիվանդության երևան գալու ժամանակը, արտաքին նշանները, թե որքան ժամանակ է որ գառներն արոտ են դուրս եկել և այլն։ Զիվանդ գառների մոտ ախտորոշմը կատարվում է նրանց կղկղանքի մեջ մոնիեղիաների հոդվածներ հայտնաբերելու միջոցով։

Գառներին արոտ տանելուց 25—30 օր հետո, անհրաժեշտ է ամեն օր առավոտյան շենքից կամ աղալից դուրս հանելու ժամանակ գննել գառների նոր արտաթորած կղկղանքը։ Եթե այնտեղ հայտնաբերենք պարագիտի սպիտակ-դեղնավուն հոդվածներ մոտ 1 ամ լայնությամբ և 2—3 մմ հաստությամբ, ապա դա ցույց կտա, որ գառները վարակված են մոնիեղիողով։ Այդ հոդվածներից մեկը երե դնենք երկու առարկայական ապակիների միջև և ճգմելուց հետո հետազոտենք միկրոսկոպով, կգտնենք մեծ քանակությամբ մութ-մոխրագույն ձվեր։

Կարելի է նաև գառան ուղիղ աղիքից կղկղանք վերցնել և վերչինիս մեջ մոնիեղիայի հոդվածներ հայտնաբերել։ Թեև այս մեթոդը հեշտ է, բայց միշտ բավարար արդյունք չի տալիս։

Ավելի ստուգ ախտորոշում կատարվում է մահացած կենդա-

նիների դիակները հերձելու միջոցով։ Կարելի է նաև ծանր հիվանդ գառների հարկադրաբար դիահերձումով պարզել նրանց հիվանդությունը։ Եթե նրանց մեջ մոնիեղիող հայտնաբերվի, ապա այդ կնշանակի, որ մոնիեղիողը տարածված է տվյալ հոտում։

Մոնիեղիաների ձվեր հայտնաբերելու համար խորհուրդ է տըրպում կղկղանքը հետազոտել ֆյուլերորնի մեթոդով։ Դրա համար 40—50 գառներից պետք է կղկղանք վերցնել, յուրաքանչյուրից 7—8 գնդիկ, և ուղարկել մոտակա անասնաբուժական լաբորատորիա քննության համար։

Ֆյուլերորնի մեթոդով մոնիեղիողի նկատմամբ հետազոտում կատարելու համար պետք է վերցնել հավասար շափով աղ և ջուր և եռացնել մինչև հագեցած լուծույթ ստացվելը, որը սանելուց և քամելուց հետո պատրաստ է փորձադրության։ Կենտրոնաթափի փորձանոթի մեջ կղկղանքի 5—6 գնդիկ են դնում և վրան այդ լուծույթից քիչ-քիչ ավելացնելով լավ խառնում են ապակե ձողով, մինչև որ հավասարաշափ խառնուրդ ստացվի։ Այնուհետև փորձանոթները դնում են կենտրոնաթափի մեջ է կենտրոնաթափում են՝ 1—2 րոպե։ Եթե կենտրոնաթափ չլինի, կարելի է փորձանոթները թողնել 30—50 րոպե հանգիստ։ Դրանից հետո փորձանոթի երեսին գոյացած փառից մինչև 1 ամ տրամագիծ ունեցող օղակով զգաւությամբ վերցնում են և առարկայական ապակու վրա քսովկ պատրաստում, որը ծածկում են ծածկապակով և հետազոտում։ Միկրոսկոպի փոքր խոշորացման սիստեմով։ Դրական ցուցմունքների դեպքում մոնիեղիաների ձվեր են հայտնաբերվում։

ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ՄՈՆԻԵՂԻՈՂԻ ԴԵՄ

Վերը նկարագրածից պարզվեց, որ մոնիեղիողը երևան է գալիս գառների և ուղերի մեջ՝ արոտ գնալուց 1,5—2 ամիս հետո, սովորաբար համաճարակի կամ տեղաճարակի բնույթ է կրում և, եթե պայքարի միջոցներ չձեռնարկվեն, նա կարող է մեծ կորուստ պատճառել։

Այժմ, երբ մենք արդեն գիտենք մոնիեղիաների կենսակերպը, կարող ենք այդ հիվանդության դեմ կիրառել պայքարի հետևյալ միջոցառումները՝

1. պրեիմագինալ կամ պրոֆիլակտիկ (նախազգուշական) հիճվահանում,

2. բուժական ճիճվահանում.

3. արոտավայրերի ճիշտ օգտագործում:

Պրեիմագինալ կամ պրոֆիլակտիկ ճիճվահանումը կայանում է նրանում, որ գառները և ուկերը ճիճվահանման ենթարկվեն այն ժամանակ, երբ նրանց աղիքներում ապրող երիզորդերը դեռ սեռահասուն չեն դարձել, ճիճվահանման այսպիսի մեթոդ կիրառելով՝ մի կողմից գառների մահացությունն է կանխվում, իսկ մյուս կողմից՝ մոնիեղիաները դեռ չհասունացած հեռացվում են վարակված կենդանիների աղիքներից, Կենդանիներին այդպիսի դեռ չհասունացած պարագիտներից ազատելով, մենք կարող ենք նաև կանխի արոտավայրերի հետագա ախտավորվելը մոնիեղիաների ճիշտով:

Այն տնտեսություններում, որտեղ այս կարգի պլանային միջոցառումներ են ձեռնարկվում, կանխվում են մոնիեղիովը և նրանից առաջացող մահացության դեպքերը:

Բուժական դեհելմինթիվացիա անց է կացվում այն դեպքերում, երբ արգեն գառների մեջ կան մոնիեղիովով ճիճվանդներ և նույնիսկ մահացության դեպքեր են նկատվել: Նման դեպքերում գառների բուժումը պետք է ձեռնարկել առանց ձգձգումների:

Մոնիեղիովի բուժման համար գոյություն ունեն մի քանի դեղանյութեր, սակայն դրանցից արդյունք տվողը, ճիշտ օգտագործելին և էժանագինը պղնձարջասապն է, որը լայնորեն օգտագործվում է նաև որիշ ճիճվային ճիճվանդությունների ժամանակ:

Պղնձարջասապը գործադրում են 1 % կամ 1.125 % շրային լուծույթի ձևով:

Պղնձարջասապը ջրի մեջ ճիշտությամբ է լուծվում, բայց եթե չուրն իր մեջ մեծ քանակությամբ լուծված դրությամբ զանազան աղեր է պարունակում (հատկապես կալցիումի աղեր), այդ դեպքում, պղնձարջասապը լուծելիս արագ կերպով գորշագույն փաթիլների նման նուտվածք է առաջանում, որն սկզբում լույսով է լուս ծովով մեջ: Մետաղյա նյութերի ներկայությունից հս պղնձարջասապը շուտով քայլայվում է և նստվածք է տալիս: Երկու դեպքում էլ նստվածքը գտնի համար վտանգավոր է, որովհետև նա կարող է այրվածքներ առաջ բերել մարսողական օրգաններում:

Այդպիսի լուծույթի քամել չի կարելի, որովհետև պղնձարջասապի մի մասը, որը գտնվում է նստվածքի մեջ, կարող է դուրս մնալ:

Դրա հետևանքով լուծույթի մեջ գտնվող պղնձարշասպի քանակը կարող է պակասել, իսկ ազդեցությունը երիզորդերի նկատմամբ՝ թուլանալ:

Պղնձարշասպը լուծելու համար ամենալավը թորած չուրն է համարվում: Թորած չուր լինելու դեպքում կարելի է անձրևի, ձյան, ջրհորի, աղբյուրի կամ գետի թարմ մաքուր չուր օգտագործել: Լուծույթը գործադրության օրը, կամ՝ նախորդ օրն են պատրաստում: Փատրաստի լուծույթը երկար պահելուց հետո գործածելն արգելվում է: Եթե պղնձարշասպի լուծույթի մեջ փաթիլանման գոյացություններ լինեն, անհրաժեշտ է ամեն մի լիոր լուծույթին 1—4 խորանարդ սանտիմետր աղաթիու խառնել: Աղաթիուն խառնելուց հետո, լուծույթում եղած փաթիլներն անմիջապես լուծվում անհետանում են, լուծույթը դառնում է պարզ, երկնագույն: Այդպիսի լուծույթը քամելուց հետո համարվում է պիտանի, որով և կարելի է մոնիեզիոզի բուժում կատարել: Պղնձարշասպի լուծույթը պատրաստել կարելի է միայն ապակյա, փայտե կամ կավե ամանի մեջ, իսկ մետաղե ամանում լուծույթը պատրաստելը կտրականապես արգելվում է:

Պղնձարշասպի լուծույթը գառներին կարելի է խմացնել շպրիցի կամ խոլի ապարատի օգնությամբ:

Պղնձարշասպի 1,125% լուծույթը պատրաստելու համար խորհուրդ ենք տալիս նախօրոք պատրաստել պղնձարշասպի 45 գրամանոց դեղափոշիներ, որոնցից յուրաքանչյուրը լուծել չորս լիոր ջրում:

Այդ լուծույթը տալուց առաջ, գառներին պետք է 10—12 ժամ քաղցած պահել:

Պղնձարշասպի լուծույթի դոզաներն են՝

1—մինչև 1,5 ամսական գառներին		15—20 խոր.	սմ
1,5 "	2 "	20—25 խոր.	սմ
2 "	3 "	25—30 "	"
3 "	4 "	30—35 "	"
4 "	5 "	35—40 "	"
5 "	6 "	40—45 "	"
6 "	7 "	45—50 "	"
7 "	8 "	50—60 "	"
8—ից բարձր		70—80—100 խ.	"
Զափանաս ոչխարներին		100—120 խոր.	"

Նայած կենդանու ընդհանրութ վիճակին և գիրության աստիճանին, այս դողաները կարող են որոշ տատանում ունենալ:

Մոնիթեզիոզի դեմ նախազգուշական գեհելմինթիզացիա կատարելիս, եթե չկան մոնիթեզիոզով բացահայտ հիվանդներ, կարելի է բավարարվել միայն գառներին պղնձարջասպի լուծույթ խմացնելով:


Այդ ձեռվ ճիճվահանում կատարվում է գառներին արոտ տանելուց 25—30 օր հետո, եթե մոնիթեզիաները դեռ այնքան չեն մեծացել: պղնձարջասպը նրանց շուտով սպանում է և նրանք կը դրդանքի հետ հեռացվում են գառների աղիքներից:

Այն տնտեսություններում, որտեղ մոնիթեզիոզն արդեն պարզ արտահայտված է և կան բացահայտ հիվանդներ ու նույնիսկ գառների մահացության դեպքեր են տեղի ունեցել, անհրաժեշտ է պղնձարջասպի լուծույթ տալուց 2—4 ժամ հետո գառներին տալ լուծողական՝ պատրիերյան աղի կամ անգլիական աղի լուծույթը կուծողականը՝ պատրաստվում է այսպես՝ մեկ կիլոգրամ գլաւրերյան կամ անգլիական աղը լուծում են երկու լիտր տաք ջրով: Այս լուծույթը գառներին տրվում է հետեւյալ դողաներով՝

1—1,5	ամսական գառներին	30 խոր. սմ
1,5—2	"	"	.	.	.	40 "
2—3	"	"	.	.	.	50 "
3—4	"	"	.	.	.	60 "
4—5	"	"	.	.	.	70 "
5—6	"	"	.	.	.	80 "
6—7	"	"	.	.	.	90 "
7—8	"	"	.	.	.	100 "
8-ից բարձր հասակ ունեցողներին	100—120—180 խոր.	սմ

Լուծույթները շշից կամ ուրիշ ամանից խմացնելուց պետք է խուսափել, որովհետև նրանք կարող են երրեմն ընկնել կենդանու շնչափողն ու նրան շնչահեղձ անել: Նման անախորժությունից խուսափելու համար խորհուրդ է տրվում օգտագործել Խոլի ապարատը, որը բավական պարզ կազմություն ունի: Նա բաղկացած է տակառից, որի մեջ լուծույթն են լցնում, աստիճանների բաժանված ապակյա շշից, որը երկու անցք ունի, և ուստինե խողովակներից: Տակառի անցքն ու շշի անցքերից մեկը միացած են ուստինե խողովակով, որի միջոցով լուծույթը տակառից դեպի շիշն է հո-

սում: Վերջինից մյուս ռետինե խողովակը ձգվում է դեպի ցած և վերջանում ծայրապանակով: Երկու խողովակներն ել սեղմիչներ ունեն:



Նկ. 7. Խոլի ապարատը:

Խոլի ապարատը դնում են 1—1,5 մետր բժարձրության վրա և բաց են անում առաջին խողովակի սեղմիչը, որի շնորհիվ լուծույթը տակառից հոսում է դեպի շիշը: Եթե շիշն արդեն լի է ցանկացած քանակությամբ լուծույթով, ապա սեղմիչը փակում են, իսկ երկրորդ խողովակի ծայրապանակը դնում են գառան բերանը և բաց անում սեղմիչը: Այս անգամ լուծույթը 22ից հոսում է երկրորդ խողովակի միջով դեպի գառանը: Որպեսզի լուծույթը միանգամից լինի, ծայրապանակը պետք է նեղ անցք ունենա, իսկ ռետինե խողովակի տրամադիծը 1 սմ-ից ավելի լայն լինի: Պղնձարշասպի լուծույթը կարելի է խմացնել նաև հետեւյալ պարզ ձևով: Մոտ 1,5 մետր երկարություն ունեցող ռետինե խողովակի մի ծայրին հագնում են ձագար, իսկ մյուս ծայրին՝ ծայրապանակ:

Զագարն ամբացնում են սյունին՝ մոտ 1,5 մետր բարձրության վրա. իսկ խողովակի մյուս ծայրը գնդամ են գառան բերանը, որից հետո լուծույթի համապատասխան դոզան լցնում՝ ձագարի մեջ: Լուծույթը խմացնելիս պետք է հետևել, որ կենդանու գլուխը գետնի հետ հորիզոնական լինի, որպեսզի լուծույթը դեպի շնչառական ուղիները հոսալով կենդանուն շնչահեղձ լանի: Գառներին շպրիցի միջոցով լուծույթ խմացնել կարելի է նաև առանց նրա (շպրիցի) վրա ասեղ հագցնելու:

ԴԵԼԵՄԻՆԹԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԴԸ

Երեկոյան գառներին առանձնացնում են մի շենքում կամ աղալում և քաղցած թողնում մինչև առավոտ: Առավոտյան աղալի (կամ շենքի) դռան մոտ, երկու կողմերից, կես մետր խորությամբ փոսեր են փորում, որոնցից մեկում լուծույթ խմացնող անասնաբուժն է կանգնում, իսկ մյուսում՝ գառ բռնողները: Հենց այդտեղ, մոտ մեկ ու կես մետր բարձրության վրա, Խոլի ապարատն են տեղավորում, կամ ամբացնում են մի սյուն, որի վրա ուժինե խողովակին միացրած ձագարը տեղավորելու համար օղակ են սարքում: Գառներին աղալից (կամ շենքից) մեկ-մեկ դուրս են հանում, բռնում երկու փոսերի մեջտեղ ընկած տարածության վրա և լուծույթ խմացնելուց հետո բաց թողնում:

Բոլոր գառներին պղնձարշաստի լուծույթ տալուց 2—4 ժամ հետո, նույն կարգով գլարութերյան աղի (1:2) լուծույթն են տալիս:

Դեհելմինթիզացիայից հետո գառներին թողնում են մայրերի մոտ՝ ծծելու: 1—2 ժամից հետո կարելի է նրանց նոր քաղցած կահալ խոտ տալ: Այս օրը գառներին ջուր չկ տրվում: Այս դեպքում, երբ կահալ խոտիվ գառներին բավարարելն անհնար է, պետք է մոտակա արոտավայրից որոշ արոտամաս հատկացնել դեհելմինթիզացիայի ենթարկված գառների համար և այդ արոտամասում նրանց պահել երեք օր: Գառների գիշերելու տեղից և հանգստատեղից հավաքած ամբողջ կոկանքը, դուրս թափված երիզորդերի հետ միասին, անհրաժեշտ է անպայման հավաքել և ալրել կամ ինքնայրման ենթարկել բիոթերմիկ մեթոդով (տես «պայքարի միջոցները ֆասցիոլոգի դեմ» գլուխը):

Եթե գեհելմինթիզացիայից հետո մոնիեզիոզով տառապով մեծ քանակությամբ հիւլանդներ լինեն, բուժումը պետք է կրկնել, սակայն ոչ շուտ, քան 15—20 օրից հետո:

Թրեխմագինալ կամ պրոֆիլակտիկ գեհելմինթիզացիան պետք է կատարել գառներին արոտ զուրս բերելուց 25—30 օր հետո միայն, այսինքն՝ այն ժամանակ, երբ մոնիեզիա երիզորդները դեռշին երկարել և հասունացել: Բոլոր այն գառներին, որոնք հասել են մեկ ու կես ամսական հասակի, պետք է ենթարկել գեհելմինթիզացիայի, իսկ մի ամսականից փոքր գառներին պղնձարջասպի լուծույթ տալ չի կարելի:

Ինչպես հայտնի է, բացի գառներից և ուկերից, մոնիեզիոզով հաճախ վարակված են լինում նաև շափահաս ոչխարները և այծերը: Ներ ինների մեջ մոնիեզիոզից մահացություն կամ բացահայտ հիվանդություն չի նկատվում: Սակայն, որպես պարագիտակիրներ, նրանք արոտավայրի վարակման մշտական աղբյուր են հանդիսանում, որտեղ հողային տղիկների թիվը մեծ է: Վերջինների մեջ մոնիեզիաների ձվերը զարգանալով հետևյալ տարում գառների և ուկերի, ինչպես նաև ոչխարների և այծերի համար վարակիչ են դառնում:

Հեկավարվելով գիտական այդպիսի տվյալներով և նպատակ ունենալով իսպառ վերացնել մոնիեզիոզը, մենք պետք է այդ հիվանդության դեմ միջոցառումներ կիրառենք այն հաշվով, որ մի կողմից դադարեցնենք արոտավայրերի վարակումը մոնիեզիաների ձվերով, իսկ մյուս կողմից էլ կանխենք կենդանիների վարակումը մոնիեզիոզով:

Ուստի չպետք է բավարարվել միայն գառների և ուկերի, ճիճվահանումով:

Անհրաժեշտ է մոնիեզիոզի տեսակետից անապահով տնտեսություններում ոչխարների և այծերի ամբողջ գլխաքանակը ենթարկել ճիճվահանման, հետևյալ կարգով.

1. Գարնանը, նախքան արոտ տանելը, բոլոր ոչխարներին և այծերին ենթարկել ճիճվահանման:

2. Գառների և ուկերի պրոֆիլակտիկ ճիճվահանման ժամանակ ճիճվահանման ենթարկել նաև ոչխարների և այծերի ամբողջ գլխաքանակը:

3. Աշնանը, մսուրային շրջանն անցնելուց հետո, նույն կար-

գով պրոֆիլակտիկ ճիճվահանման ենթարկել ոչխարների և այծերի, ինչպես նաև արդեն 6—7 ամսական դարձած գառների և ուերի ամբողջ զլխաքանակը:

Այնպիսի արոտավայրերում, որտեղ անցյալ տարի մոնիեղիողով հիվանդ կենդանիներ են արածել, այս պարի գառներ և ուկեր արածացնել չի կարելի, որովհետև այդպիսի արոտավայրերում մոնիեղիողի վարակիչ աստիճանի թրթուրներով հողային տղիկների քանակովը մեծ է լինում, որը կարող է մասսայական վարակման պատճառ դառնալ: Ուստի, պետք է գառների և ուկերի համար առանձնացնել որոշ արոտամաս և արգելել այնտեղ շափառաս ոչխարներ և այծեր, ինչպես նաև գառներ և ուկեր արածացնելը: Այդ արոտամասը պետք է հետեւյալ տարի օգտագործվեմիայն գառների և ուկերի համար:

Բացի մոնիեղիողից, ոչխարները, այծերը, գառները և ուկերը վարակվում են նաև անոպլոցեֆալիտների ընտանիքի այլ երիզորդերով, որոնցից հաճախ հանդիպում են տիզանիեղիողը, ստիլեղիողը և ավիտելինողը: Այդ ճիճվային հիվանդովթյունները դեռևս լրիվ ուսումնասիրված չեն և նրանց դեմ պայքարի թիջոցներ մշակված չեն:

Դրանց հայտնաբերման դեպում առաջմ գործադրվում են նույն միջոցները, ինչ որ մոնիեղիողի դեմ:

Յ. ՌԶԽԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՅԵՐԻ ԷԽԻՆՈԿՈԿՈԶԸ

Էխինոկոզը ոչխարների, այծերի, խոշոր եղքերավոր անաստաների և խոզերի ճիճվային հիվանդովթյուն է, որ առաջանում է էխինոկոկ կոչվող երիզորդի փուշիկային-թրթուրային ձևի շնորհիվ: Այդ երիզորդի սեռահասուն ձևը մակարուժվում է շների և գայլերի բարակ աղիքներում:

Էխինոկոզը շատ տարածված ճիճվային հիվանդովթյուններից մեկն է և հանդիպում է ամենուրեք: Այն վայրերում, որտեղ թափառող շներ շատ կան, այդ հիվանդովթյունն ավելի է տարածված: Սպանդանոցներում մսի անասնաբուժական ստուգման ժամանակ էխինոկոզը հանդիպում է ոչխարների մինչև 50% մոտ: Սպանդի ժամանակ, էխինոկոզով ախտահարված օրգանները խոտանվում են և այդպիսով խոշոր տնտեսական վնաս պատճա-

առամ: Այդ հիվանդությունը հաճախ ծանր ընթացք է ունենում: Սաստիկ ախտահարված կենդանիներն աստիճանաբար հյուծվում են և վերջիվերջո մահանում: Հիվանդությունը կարող է տարիներ տևել: Էխինոկոկոզվ հաճախ ախտահարվում են նաև մարդիկ: Նրանց հիվանդությունը սովորաբար շատ ծանր է ընթանում և մահացության պատճառ է դառնում:

ԵԽԻՆՈԿՈԶԻ ՀԱՄԱՌՈՏ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

Էխինոկոզի հարուցիչը պատկանում է երիզորդերի շարքին: Մեռահասուն ստագիայում, այդ պարագիտն ապրում է զների և գայլերի աղիքներում: Էխինոկոկի սեռահասուն պարագիտը 2—6 մմ երկարություն ունի, բաղկացած է գլխիկից և երեք կամ չորս հոդվածներից: Վերջին հոդվածը իր մեջ պարփակում է արգանդը՝ լցված ձվերով: Գլխիկը 0,3 մմ լայնություն և կնճիթ ունի, որի վրա կան երկու շարք կեռիկներ: Դրանց թիվը տատանվում է 28—50-ի սահմաններում: Առաջին և երկրորդ հոդվածները հերձաֆրոդիտային են, իսկ վերջին հոդվածը իր մեջ պարունակում է մինչև 400—800 ձվեր:


Շների և գայլերի աղիքներում երիզորդն աճում է երեք ամառամ: Այդ պարագիտների քանակությունը շների բարակ աղիքներում երբեմն հասնում է հարյուրների և հազարների: Շները և գայլերն իրենց կղկղանքի հետ էխինոկոկի բազմաթիվ հոդվածներ և ձվեր են արտադրում: Նրանք արտաքին միջավայրում (արոտավայրերում, խոտերի վրա, գոմերում կամ ոչխարների կանգնելու տեղում, կերի կամ գետնի վրա, ջրելատեղում) կարող են երկար ժամանակ մնալ: Եթե ոչխարները, այծերը կամ մյուս կենդանիները ալդ ձվերից կուկ տան, կվարակվեն: Այդ կենդանիների ստամոքսում, ստամոքսահյութի ազդեցությունից ձվերի թաղանթը քայլայվում է, որից հետո ձվերից ազատված թրթուրները (օնկոսֆերները) իրենց և կեռիկների օգնությամբ ծակում են աղիքի պատը, մտնում արյան անոթների մեջ և այնտեղից արյան հոսանքով հասնում լարդ: Թրթուրների մի մասը լարդում կանգ է առնում, իսկ մյուսը դարձյալ արյան հոսանքով հասնում է թոքերը, որտեղ մեծ մտսամբ կանգ է առնում: Թրթուրները հետագայում զարգանում

հն, և նրանցից գոյանում են էլսինոկոկի փուշիկներ: Երբեմն թրթուրների որոշ մասն անցնում է այլ օրդաններ և այնտեղ զարդանում: Ամենից հաճախ էլսինոկոկն ախտահարում է լարզը և թռքերը, իսկ մյուս օրդաններում հազվադեպ է լինում:

Էլսինոկոկի փուշիկի զարդացումը կարող է ամիսներ և նույնիսկ տարիներ տևել:

Էլսինոկոկի փուշիկները լինում են երկու տեսակ՝ միակամերային և բազմակամերային:

Մեկ կամերայով էլսինոկոկի փուշիկը բաղկացած է թաղանթից և նրա մեջ լցված հեղուկից, որը թափանցիկ և անգույն է. Հավաքվում է կենդանու արյունից:



Նկ. 8. Էլսինոկոկի զարդացման շրջանառությունը:

Այդ փուշիկները կարող են լինել տարբեր մեծության (սիսեռի հատիկից մինչև խնձորի և նույնիսկ երեխայի գլխի մեծության): Փուշիկի թաղանթը երկու շերտ ունի, որոնցից արտաքինը սպիտակավուն է: Ներքին թաղանթը, որն այլ կերպ կոչվում է հերմինատիկվ շերտ, իր մեջ պարունակում է մկանային թելիկներ, կրային նյութեր և արտաթորիչ անոթներ: Հերմինատիկվ թաղանթի վրա ցրված են բշտիկներ, որոնց պատերի վրա պարագիտի գըլ-

իմիկներ՝ (սկոլեքս) են գոյանում; Հաճախ, այդ գլխիկները պոկվում են փուշիկից և լողովմ՝ փուշիկի հեղուկի մեջ. դրանց թիվը փուշիկում երեքմն մեծ է լինում: Նրանք մանր հատիկների նման են և աչքով տեսանելի: Էլիֆնոկոկի այսպիսի փուշիկներ սովորաբար նկատվում են ոչխարների մոտ: Երբեմն փուշիկների մեջ պարագիտի գլխիկներ չեն լինում: Այդպիսի փուշիկները շներին և դայլերին վարակել չեն կարող:

Բազմակամերային էլիփնոկոկի փուշիկը բնորոշ է նրանով, որ թրթուրի խոռոշում հեղուկ չկա, այլ կան միմյանց հետ միացած զանազան ձևի սխմված մանր փուշիկներ: Այդպիսի փուշիկի կտրվածքը բջիջների տեսք ունի, որոնց մեջ գտնվում են էլիփնոկոկի պարագիտի գլխիկներ:

Ծները և գայլերը վարակվում են էլիփնոկոկի փուշիկներով՝ ախտահարված օրգաններ ուտելու հետևանքով: Այդ տեղի է ունենում այն դեպքում, եթե կենդանիների սպանդի ժամանակ ախտահարված օրգանները տալիս են շներին, կամ եթե վերջինները "շխաների դիակներ են ուտում:

Էլիփնոկոկի փուշիկների թիվը լսարդում, թոքերում և մյուս օրգաններում հասնում է մոտ 50—200-ի:

ԵԽԻՆՈԿՈԿՈԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Էլիփնոկոկի փուշիկը վարգանալով գլխավորապիս թոքերում և լսարդում, ճնշում է այդ օրգանների հյուսվածքի վրա և նրանց հետաձում առաջացնում: Եթե փուշիկները շատ են, ախտահարված օրգանը հետաձման է ենթարկվում համարյա ամբողջապիս և դրանից կենդանին մահանում է:

Եթե լսարդը էլիփնոկոկով սաստիկ է ախտահարվել, լեզիքական շափով չի արտադրվում և դրանից կենդանու մարսողությունը խանգարվում է: Թոքերի էլիփնոկոկով անդրադառնում է կենդանու շնչառության վրա և, հաճախ, մի շաբթ հիվանդագին պրոցեսների պատճառ է դառնում:

Սովորաբար լսարդն ու թոքերը միաժամանակ են ախտահարվում: Նրանց քաշը մի քանի անգամ ավելանում է: Այդ օրգանների արտաքին տեսքն անհարթ է, իսկ հյուսվածքը՝ հետաձած: Եթե

Էխինոկոկի փուշիկը կտրենք, ապա նրա միջից հեղուկը դուրս կթափալի, իսկ թաղանթը կուզ կգա: Էխինոկոկի փուշիկները երբեմն կրանոսմ կամ թարախակալում են:

ԷԽԻՆՈԿՈԿՈԶԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Ոչխարների և այծերի էխինոկոկոզի նշանները պարզ արտահայտված չեն լինում: Թոքերի սաստիկ ախտահարման դեպքում նկատվում է հեռոց, թուզլ հազ, ոչխարները վատ են դիրանոմ, բուրդը գզգզված է լինում և հեշտությամբ պոկում: Սաստիկ հազի ժամանակ ոչխարները պառկում են: Բարձր շերմություն մեծ մասամբ չի լինում, և հիվանդ կենդանին սովորաբար կերից չի հրաժարվում:

Լյարդի էխինոկոկոզի ժամանակ նկատվում է մարսողության խանգարում: Հիվանդ կենդանիներն աստիճանաբար նիհարում-հյուծվում են և երկար ժամանակ, նույնիսկ տարիներ շարունակ, մնում են հիվանդ լինճակում: Շոշափելիս՝ լարդի հատվածը ցավազգած է լինում: Հազվագյուտ դեպքում, եթե էխինոկոկի փուշի-



Նկ. 9. Էխինոկոկոզի ախտահարված ոչխարի թռերը:

կը պատովում է, հեղովար թափառում է որովայնախոռոշք և կարող է կենդանուն մահ պատճառել:

ՊԱՅՔԱՐԻ ՍԻԶՈՑՆԵՐԸ ԵԽԻՆՈԿՈԿՈԶԻ ԴԵՄ

Էխինոկոկոզի դեմ պայքարելու գործը պետք է հիմնված լինի: կիստական տվյալների վրա: Մեզ հայտնի է, որ շունը, որը ոչխար-ների հոտի մշտական պահապանն է և ուղեկիցը, միաժամանակ էխինոկոկոզի վարակի հիմնական աղբյուրն է հանդիսանուած:

Էխինոկոկոզի դեմ պայքարելու և այդ հիմքանդությունը վերացնելու համար անհրաժեշտ է՝

1. Վերացնել թափառական շներին և ամենուրեք հաշվի առնել օգտակար և պահապան շներին:

2. Խստորեն հետևել, որպեսզի սպանդանոցներում և առհա-ստրակ սպանդի ժամանակի, էխինոկոկոզով ախտահարված օրդան-ները շների բաժին չդառնան: Մահացած կենդանիների դիակները պետք է խնամքով հավաքվեն և թաղվեն անասնագերեզմանոցում:

Սպանդանոցի տերիտարիայում ոչ մի շուն չպետք է լինի: Սպանդից հետո, խոտանված էխինոկոկոզով ախտահարված օր-դանները կարելի է լավ եփել, որից հետո օգտագործել որպես կեր-խոզերի համար:

3. Տարեկան առնվազն երկու անգամ բոլոր պահապան շներին և նթարեկել ճիճվահանման:

Շների ճիճվահանման համար, էխինոկոկոզի ժամանակ գոր-ծադրում են արեկոլին և կամալա դեղերը:

Արեկոլինի դոզան յուրաքանչյուր կիլոգրամ կենդանի քաշի համար 0,002 գրամ է: Միջին հաշվով ճողվական շափահաս շնե-րին տալիս են 0,03—0,04 գրամ: Նախքան արեկոլին տալը, շնե-րին պետք է 12—18 ժամ քաղցած թողնել: Արեկոլինը տալիս են հացի, մսի կտորի կամ կաթի հետ խառն: Որպեսզի շները շվիսին, հանձնարարվում է արեկոլին տալուց առաջ 1—2 կաթիլ յոդի լու-ծովյթ տալ մի քիչ կաթի հետ միասին կամ հացի կտորի վրա: Գրա-նից 5—10 րոպե հետո տալ արեկոլինը: Շներին արեկոլինը կա-րելի է սրսկել նաև ենթամաշկային ձևով: Գրա համար 5—10 խոր, սմ թորած ջրի մեջ արեկոլինի լուծովյթ են պատրաստում, ստերիլացնում և սրակում շան մաշկի տակ: Ասեղները և շպրիցը նույնպես պետք է ստերիլ լինեն:

Սովորաբար արեկոլինը տալուց 20—30 րոպե հետո սկսվում է փորլուծ և կղկղանքի հետ միասին դուրս են գալիս աղիքներում գտնված երիզորդերը:

Եների ճիճվաճանման համար կամալա դեղը տալիս են 5—10 գրամ գողացով, հացի կտորի կամ կաթի հետ միասին:

Հակաճիճավլին դեղը տալուց հետո, շներին պետք է անպայման կապած պահել երեք օր, որից հետո ամբողջ կղկղանքը արտաթրուված ճիճուների հետ միասին հավաքել և այրել կամ խորթաղել:

Ոչխարների, այծերի և մյուս կենդանիների փուշիկային-թրթուրային էխինոկոկոզը անբռնվելի է: Մարդկանց մոտ էխինոկոկոզի բուժման համար բարդ վիրահատություն են կատարում, որը սակայն հիվանդները դժվար են տանում:

Էխինոկոկոզի դեմ պայքարը պետք է տարվի սիստեմատիկ կերպով: Երբեք շպիտք է մոռանալ, որ այդ հիվանդությունը մարդկանց մոտ շատ ծանր ընթացք է ունենում և երբեմն մահացու է վինում: Եթե անապահով շրջաններում այդ աշխատանքը կատարվի պլանավորված կարգով, ապա կարճ ժամանակամիջոցում հիվանդությի բոլորովին վերացնել այդ կորստարեր հիվանդությունը:

4. ՈՉԽԱՐՆԵՐԻ ՑԵՆՈՒՐՈՁԸ (ՊՏՈՒՏԱԽԱԾ)

Ոչխարների ցենուրովը կամ պտուտախտը ճիճվային հիվանդություն է: Նա առաջանում է շների, գայլերի և աղվեսների բարակ աղիքում մակաբուծվող մուզիցեպս կոչվող երիզորդի թրթուրային ձևից, որը կոչվում է ուղեղի ցենուրուա:

Այդ հիվանդության դեպքում ախտահարվում է գլխավորապես գանգուղեղը:

Ցենուրովը տարածված է մի շարք ոչխարաբուծական տնտեսություններում, որտեղ ոչխարների վարակվածության տոկոսը երբեմն 1—4-ի է հասնում և նույնիսկ ավելի:


Ցենուրովը մեծ կորուստներ է պատճառուամ: Հիվանդ ոչխարները մորթվում են որպես անբռեժելի, կամ հյուծվում և մահանում:

ՈՉԻԱՐՆԵՐԻ ԳՏՈՒՑԱԿ


Պատումախտով հիվանդ ոչխարի գլուխը,
տալիս են շանը

ՑԵՆՈՒՐՈՒՄ

Պատումախտով հիվանդ ոչխարի



ԴՌՈՒՏԱՆՏՈՎ ՀԻՎԱՆԴ ՈՉ-
ԽԱՐԻ ԳԼՈՒԽԸ ՏԱԼԻՍ ԵՆ
ՏԱՆՑ



ԸԱՆ ԱՌԻՔՆԵՐՈՒՄ ԱՅԵՑ ԾՐԻԶՈՐԴ


Ծան աղիքում անեց երիզորդ

ՑԵՆՈՒՐՈՒՄ




ԴԱՐԱՁԻՆԻ ՅՈՒՆ
ԴԻ ԿՈՎԱՐ ՅԵ-
ՆՈՒՐՈՒԿ

ԾՈՒՆԸ ՏԱՐԱԾՈՒՄ և ՊԱՐԱԴԻՏԻ ԶԿԵՐԸ,
ՈՈՈՆՔ ՈԽԱԿՐՆԵՐԸ ԿՈՒԼ ԵՆ ՏԱԼԻՍ



ԴՐՈՒՏԱՆՏՈՎ
ՀԻՎԱՆԴ ՈՉԽԱՐ



ԾՈՒՆԸ ՄԱՐԱՁՈՒՄ է պարազիտի ձվերը,
որոնք ոչխարները կուլ են տալիս

Նկ. 10. Պարազիտի զարգացման շրջանառությունը

Այս հիվանդության հարուցմբ սեռահասում պարագիտը, որը մակաբուծվում է շների, գալերի և աղվեսների բարակ աղիքներում, 40—60 սմ երկարություն ունեցող մի երիզորդ է, ունի գրւխիկ, որի վրա կան 4 ծծիչ, 22—23 կեռիկ և մոտ 200—250 հողված: Հասում հողվածները պոկվելով երիզորդից, կղկղանքի հետ դուրս են գալիս արտաքին միջավայր, որտեղ նրանց թաղանթը պատովում է և ձվերը տարածվում են կանաչի, հողի վրա և ջրի մեջ: Ոչխարները, իսկ հաղվագյուտ դեպքում նաև ուրիշ կենդանիները հանդիսանում են այս պարագիտի միջնորդ տերերը:

Ցենուրողով վարակվում են գլխավորապես մինչև 2 տարեկան ոշխարները, եթե ոչխարները խոտի հետ միասին կուլ են տալիս նաև այդ պարագիտի ձվերը, նրանք վարակվում են ցենուրողով: Նրանց աղիքում ձվից դուրս է գալիս թրթուրը (օնկոսֆերան), որը ճեղքում է աղիքի պատը, մտնում արյան անոթների մեջ և արյան հոսանքով հասնում գանգուղեղ, որտեղ փուշիկածե թրթուր է դառնում և, ինչպես վերը հիշվեց, կոչվում է ուղեղի ցենուրուա:

Փուշիկածե թրթուրը կամ ուղեղի ցենուրուա արտաքինից պատաժ է պիխոդ թաղանթով: Նրա ներսում հավաքված է լինուա հեղուկ, որի մեջ երևում են պարագիտի բազմաթիվ գլխիկներ: Այդ թրթուրի ներքին հերմինատիվ շերտի վրա կամած են շատ գլխիկներ, որոնց թիվը կարող է հասնել մինչև 300-ի: Ցենորուաի մեծությունը սիսեռից մինչև ընկուզի չափ է:

Ցենուրուաի հիվանդագին աղեցցությունը կայանում է նրանում, որ նա մեխանիկորեն ճնշում է գործ դնում ուղեղի և գանգի վրա: Ցենուրողից մահացած ոշխարների գանգուղեղում հայտնաբերվում է մեկ, իսկ հաղվագյուտ դեպքերում նաև երկու փուշիկածե թրթուրը: Նրանք սովորաբար ուղեղի կիսագնդերի վրա են լինուա և իրենց ճնշմամբ երբեմն նույնիսկ ծակում են գանգի սուկրները: Ողնուղեղում ցենուրուաները շատ հաղվադեպ են լինուա: Եթե շունը ցենուրողով հիվանդ ոշխարի գլուխ ուտի, ապա նրա աղիքներում փուշիկածե թրթուրի գլխիկներ կղարգանան և կդառնան սեռահասում երիզորդեր:

ՑԵՆՈՒՐՈՁԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հիվանդության նշանները նկատվում են ոշխարի վարակման շուռացին օրերին, երբ թրթուրներն ուղեղն են ընկնուա և գանգու-

ղեղի բորբոքում ու գրգիռ են առաջացնում: Դրա հետևանքով ոշխարներն աննպատակ շարժումներ են անում, երբեմն ընկճած են լինում, պառկում են, կամ հոտից ետ են մնում: Վարակված ոշխարների մի մասը մահանում է 6—7 օրից հետո ուղեղի սուրբորբոքման պատճառով:

Դրանից հետո հիվանդության նշանները հետզհետև անհետանում են: Այդ ժամանակ ուղեղում ցենուրուաի փուշիկն է աճում: 2—6 ամիս հետո նորից նկատվում են հիվանդության նշաններ: Ոչխարներն ընկճած են լինում, շուտ հոգնում, հոտից ետ մնում, երկար ժամանակ կեր չեն ուտում, շրջապատի նկատմամբ անտարբեր դառնում և այլն: Այդ ժամանակ ոշխարները նիհարում են և պարերաբար շրջապտույտներ գործում ձախ կամ աջ կողմը, կամ ետ-ետ գնում, կամ առաջ վազում: Հենց այդ պատճառով այս հիվանդությանը «սպուտախտ» անունն են տվել: Շրջապտույտների նոպաները մի քանի բոպեից մինչև մի ժամ է տևում, կամ ավելի շիվանդ ոշխարները հյուծվում են և հետո մահանում:

ՑԵՆՈՒՐՈԶԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ

Ցենուրովի ախտորոշումը կատարվում է արտաքին նշանների հիման վրա, բնորոշ շրջապտույտներ նկատվելու դեպքում: Սակայն պետք է նշել, որ նման նշաններ նկատվում են նաև մոնիթորիզմի ժամանակ և քթի խոռոշային բոռերից: Վերջինների դեպքում շրջապտույտներն այնքան ել բնորոշ չեն. կենդանին պտույտներ գործում է տարբեր ուղղությամբ: Ճիշտ ախտորոշման համար հանձնարարվում է հետազոտել քթի խոռոշները՝ բոռեր հայտնաբերելու համար և քննություն կատարել մոնիթորիզմի նկատմամբ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՑԵՆՈՒՐՈԶԻ ԴԵՄ

Ցենուրովի հիվանդ ոշխարների բուժումը սովորաբար չի կատարվում: Կարելի է միրաժամանակուն կատարել զլիսի վրա և հեռացնել ցենուրուաի փուշիկը կամ նրա միջի հեղուկը: Սակայն բուժման այս ձեզ շատ բարդ է և հազվագյուտ դեպքում է գործադրովում:

Ցենուրովը կանխելու համար հանձնարարվում է կիրառել

նույն միջոցները, ինչ որ էլախնոկոկովի ժամանակի քանի որ վարակի հիմնական աղբյուրը շունն է հանդիսանում, ապա պետք է կանխել նրա վարակումը, այսինքն՝ ցենուրուզով հիվանդ ոչխար-ների գլուխները պետք է խոր թաղել կամ այրել: Շներին, հատկապես հովվական շներին պետք է պարբերաբար ճիճվահանման ենթարկել (տարին 2 անդամից ոչ պակաս): Շների ճիճվահանմանը կատարվում է նույն դեղերով և ձևով, ինչպես էլսինոկոկովի դեպքում:

Պետք է վերացնել թափառական շներին, որոնք նույնպես կարող են վարակի աղբյուր հանդիսանալ: Հովվական շների պահպանումը պետք է հանձնարարվի որոշ հովվների, որոնք լավ պետք է գիտակցեն շների դերը ճիճվային հիվանդությունների տարածման գործում:

Ցենուրուզով հիվանդ ոչխարների սպանդը պետք է կատարել ոչ թե ոչխարանոցների մոտ, այլ հատուկ սպանդակայանում, անասնաբուժի կամ անասնաբուժակի հսկողությամբ:

Նկարագրված պրոֆիլակտիկ միջոցառումներով մենք կարող ենք ոչխարաբուժական տնտեսություններում վերացնել ցենուրովը և կանխել նրանից առաջացող կորուստները:

5. ՈՉԽԱՐՆԵՐԻ ՀԵՄՈՆԽՈԶԸ ԿԱՄ ՇՐԴԱՆԻ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ոչխարների և մյուս որոճող կենդանիների հեմոնխոզն այն հիվանդությունն է, որն առաջանում է նրանց շրդանում մակարուծվող տրիխոսարոնգիվների ընտանիքի հեմոնխուս ցեղին պատկանող կլոր ճիճունների շնորհիվ: Ոչխարների շրդանում բացի հեմոնխուսներից, մակարուծվում են նաև ուրիշ ցեղերի կլոր ճիճուններ, որոնք նույն ընտանիքին են պատկանում, սակայն ավելի հաճախ հանդիպում են հեմոնխոզ ցեղի պարագիտները, որոնք ամենից վտանգավորն են և մի շաբթ դեպքերում ոչխարների մեծ կորուստների և համաճարակի պատճառ են դառնում:

Տրիխոսարոնգիվների ընտանիքի ճիճուններով ախտահարվում են մանր եղջերավոր անասունները, հաճախ իրադարձությունները և երրեմն այլ կենդանիներն ու որոշ գեղքերում նաև մարդիկ:

Սակավաթիվ հեմոնխուսների ազդեցությունը ոչխարների վրա մնում է աննկատելի, իսկ մեծաքանակ պարագիտները կարող են առաջ բերել ծանր հիվանդություն, մահացություն և նույնիսկ համաճարակներ։ Շատ տնտեսություններում այդ հիվանդությունից առաջացած մահացությունը կարող է մինչև 80 % համանել։ Հեմոնխոզի համաճարակն ավելի հաճախ զարգանում է խոնավ, ցածրադիր, հեղեղուսների ենթակա և անձրևոտ վայրերում։ Ավելի շատ նա տարածված է այն կենդանիների մեջ, որոնք երկար ժամանակ արածում են միկնուցն արոտավայրում։ Միենալուն կենդանու շրդանում և աղիքներում այդ պարագիտներից հայտնաբերվում են հատիւ կենտ, իսկ երբեմն էլ, հիվանդության սուր արտահայտության ժամանակ, հազարավոր և մինչև անդամ մի քանի տասնյակ հազարավոր հեմոնխուսներ։

Որոճող կենդանիների, գլխավորապես մանր եղջերավոր անասունների մեջ հեմոնխոզի տարածման պատճառը մի կողմից անասնապահական տնտեսություններում այս հիվանդության դեմ շպայքարեն է, իսկ մյուս կողմից՝ այն հանդամանքը, որ պարագիտների թրթուրները, արտաքին միջավայրում վարակիչ աստիճանի հասնելուց հետո, կուտակվում են մեծ քանակությամբ և ամիսներ շարունակ շնորհուած իրենց կենսունակությունը և վարակելու ընդունակությունը։

Հեմոնխոզի պատճառած վնասը միայն ոչխարների մահացությունը չէ։ Հիվանդ կենդանիները նիշաբում են, նրանց մթերատվությունը զգալի չափով պակասում է։ Վատանում է նաև կաթի, բրդի և մսի որակը։ Նրանց շրդանի և աղիքների մեջ մակարուծվող պարագիտները ձվեր են արտադրում, որոնք կղկղանքի հետ արտաքին միջավայր են դուրս գալիս և արոտավայրերն ախտավորելով բարենպաստ պայմաններում (անձրևոտ եղանակ, խոնավ արոտավայրեր) նոր համաճարակների պատճառ են դառնում։

ԵԵՄՈՆԽՈԽԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոչխարների հեմոնխոզի հարուցիչները հեմոնխուս կոչվող կլոր ճիճուններն են։ Նրանց արժեքների երկարությունը 1—2, իսկ էգերինը 1,3—3 սմ է։ Հեմոնխուսներն ունեն բերանի պատիչ (կապսու), որը շատ փոքր է և ունի մեկ ատամ։ Գլխածայրում

գտնվում է ներկային օղակը, իսկ նրա հտևում՝ պարանոցային երկու պատկիները: Արու հեմոնխուսները պոչի ծայրում ունեն անհամաշափ պարկով (բուրսա): Էգերն ունեն երկու ճյուղի բաժանված արգանդ, որը սովորաբար լցված է լինում մեծ քանակությամբ ձվերով: Էգերի սեռական անցքը՝ բունոցը (վուլվան) պարագիտի հտեւ մասսամն է գտնվում և ծածկված է լեզվակածեւ կափարիչով:

Հեմոնխուսները մակաբուծվում են որոճող կենդանիների շըրդանում, երբեմն էլ բարակ աղիքում և, շնորհիվ իրենց մեծության (1—3 սմ երկարություն) և կարմրագույն լինելուն, աշքով լավ տեսանելի են: Հենց իրենց կարմիր գույնով և երկարությամբ նրանք տարբերվում են մյուս տրիխոսարոնգիլիդներից, որոնք ավելի կարճ են և կաթնագույն: Հեմոնխուսներն ամենից սանտիկ ազգեցությունն են թողնում անասունների վրա և ավելի ծանր հիվանդություն են առաջ բերում, քան մյուս տրիխոսարոնցիլիդները:

Հեմոնխուսի ձվերը կլոր, երկայնաձիգ ձև ունեն և բարակ թաղանթով են ծածկված:

ՀԵՄՈՆԽՈՒՍԻ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

Շրդանում մակաբուծվող էդ հեմոնխուսները բազմաթիվ ձվեր են դնում, որոնք կղկղանքի հետ արտաքին միջավայր են արտաթորվում: Արտաքին միջավայրում ձվերը հասունանում են և նրանց մեջ թրթուր է ձևակերպվում: Ամառ ժամանակ թրթուրը ձվից դուրս է գալիս մեկ-երկու օրում, իսկ ցուրտ եղանակներին այդ ժամանակամիջավայրը երկարում է: Խոնավ տեղում գտնվելու դեպքում (ջրի մեջ, կանաչի վրա և այլն), թրթուրը որոշ ժամանակից հետո թրթուրում, անշարժանում, շղթայվում է և այդ դրությամբ մնում է 8—10 ժամ: Այդ ժամանակամիջոցում թրթուրը շապիկ է հանում, այսինքն՝ նրա վերնամաշկն անջատվում է մաշկից: Այսպիսի թրթուրը կոչվում է երկրորդ ստագիայի թրթուր: Մեկ օրից հետո նա զարձյալ թմրում, անշարժանում է և նորից շապիկ հանելով անցնում՝ երրորդ ստագիան: Երրորդ ստագիայի թրթուրը ցրտի և ջերմության նկատմամբ ավելի դիմացկուն է և ոչխարների համար արգեն վարակիչ է:

Եթե այդ ստագիայի թրթուրը ջրի կամ կերի միջոցով ոչխարի կամ այծի շրդանն է ընկնում, նա այնտեղ դարձյալ իր շապիկը

Հանում է և անցնում շորրորդ ստագիան, որից հետո սեռահասուն պարագիտ դառնում: Թրթուրի ձվից դուրս գալուց մինչև ինվազիոն դառնալը տևում է 5—6 օրից ոչ պակաս: Ոչխարների վարակումը հեմոնխողով տեղի է ունենում կերի, զրի հետ միասին ինվազիոն թրթուրներ կուլ տալու միջոցով: Թրթուրները շրդանում շարունակում են իրենց զարգացումը, կազմում են շրդանի լորձաթաղանթին, սնվում կենդանու արյունով և 22—24 օրվա ընթացքում սեռահասուն աստիճանի հասնում: Ոչխարների վարակումից 25 օր հետո, նրանց կողմանքի մեջ արդեն կարելի է հեմոնխուսի ձվեր հայտնաբերել:

Ինվազիոն թրթուրներն արտաքին միջավայրում կարող են ալլրել մինչև երեք ամիս և ավելի: Նրանք կարող են նաև բարձրանալ խոտերի ցողունների վրա: Ինվազիոն թրթուրները շրությանը, ցրտին լավ են դիմանում, իսկ փոփոխական եղանակը նրանց վրա մահացու ազդեցություն է գործում: Ինվազիոն թրթուրները քիմիական նյութերի նկատմամբ բավական դիմացկուն են: Սովորական ախտահանիչ նյութերը նրանց վրա թույլ ազդեցություն են գործում, բացի կարբուզան թթվի թանձր լուծույթներից, որոնք կարճ ժամանակամիջոցում սպանում են նրանց: 60% չերմությանը նրանք չեն դիմանում: Այդ պատճառով շենքերի (ոչխարանցների) ճիճվագերծման համար հանձնարարվում է գործածել տաք լուծույթներ (5% կարբուզան թթվի լուծույթ), իսկ հատակի ճիճվագերծման համար շհանգած կիր և եռացող ջուր:

Ոչխարների վարակումը հեմոնխողով տեղի է ունենում գլխավորապես խոնավ արոտավայրերում, ծանծաղուտներում և անմաքուր ջրելատեղերում: Սաստիկ վարակում տեղի է ունենում անձրևային ամռանը:

Հեմոնխուսաների կյանքի տևողությունը շրդանում հաշվում են մինչև մեկ տարի:


ՀԵՄՈՆԽՈԶԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Շրդանն ընկած հեմոնխուսաներն իրենց ատամով վիրավորում են լորձաթաղանթը: Բացի այդ, նրանք մտնում են շրդանի ստամոքսահյութ արտադրող գեղձերի արտածորանների մեջ և դրանց բորբոքման պատճառ դառնում: Հեմոնխուսաներն իրենց կենսագոր-

ծունեռության շնորհիվ թունավոր նյութեր (տոքսիններ) են արտադրում, որոնք ազդում են տիրոջ մարսողության վրա, կամ ծծվելով արյան մեջ՝ թունավորում են առաջացնում: Տոքսինները քայքայիչ ազդեցություն են գործում գլխավորապես կենդանու արյան վրա: Երդանում հեմոնխոռաների թիւն երբեմն այնքան շատ է լինում, որ լորձաթաղանթը գրեթե ամբողջովին ծածկվում է նրանցով և թաղիքի տեսք ընդունում: Հեմոնխող հիվանդությամբ տառապող կենդանիների շրդանը բորբոքվում է, կերանյութերը կիսամարս կամ նույնիսկ անմարս վիճակում այնտեղից անցնում են աղիքները և կենդանուն լրիվ սնունդ չեն տալիս: Տոքսինների ազդեցությունն էլ հիվանդության պատկերն ավելի ցայտում է դարձնում:

Հեմոնխողով տառապող կենդանիները հետզհետե նիշարում, հյուծվում են, երկարատև ինտոքսիկացիայի հետևանքով առաջանում է սակավարյունություն, ջրարյունություն, այտուցներ, և վերշապես կենդանին մահանում է:

Հիվանդության ընթացքն ավելի սուր է դառնում այն դեպքում, եթե հեմոնխողի հետ միաժամանակ տեղի ունեն ճիճվային կամ վարակիչ այլ հիվանդություններ, կամ երբ առողջապահական և



Ալ. 11. Ոչխարի շրդանի լորձարադանքին կպած տրիխոսարոնզիլիդները:

Հատկապես ոշխարների կերակրման գործը տնտեսությունում վատ հիմքերի վրա է դրված:

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐ

Շրդանի լորձաթաղանթի վրա, հեմոնխուսների ամրացման (կպած) տեղերում հաճախ փոքր վերքեր, խոցեր և կետերի նման արյունազեղումներ են նկատվում:

Մեծ քանակությամբ պարագիտների առկայության գեղքում շրդանի պարունակությունը, արյան խառնուրդի և կարմրագույն հեմոնխուսների շնորհիվ, կարմրած է լինում:

Հեմոնխոզից մահացած կենդանիների դիակները սովորաբար սակավարյուն, հյուծված և այտուցավոր են լինում: Այտուցներ նկատվում են գլխավորապես ներքին ծնոտի և կրծքի տակ, աշքի կոպերում, ներքին օրգաններում և այլն:

Հեմոնխոզի համաճարակի ժամանակ պատահում է, որ մահացած կենդանիների շրդանում հեմոնխուսներ չեն հայտնաբերվում: Մի քանի հետազոտողներ դա բացատրում են նրանով, որ պարագիտները կենդանու մահվանից քիչ առաջ իրենց կենսունակությունը կորցնելով (սատկելով), ստամոքսահյութի ազդեցությունորհիվ մարսվում (լուծվում) են:

ՀԵՄՈՆԽՈԶԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հեմոնխոզի առաջ բերած հիվանդագին երևույթին աստիճանը, ընթացքը և վախճանը կախված են գլխավորապես պարագիտների քանակից և կենդանու ընդհանուր դրությունից:

Որքան ավելի մեծ է պարագիտների թիվը, այնքան ավելի սուր և ուժեղ կերպով է արտահայտվում հիվանդությունը, և ընդհանակը՝ նրանց քշության դեպքում առաջանում, է հազիվ նկատելի (նույնիսկ աննկատելի) և երկարատև հիվանդություն:

Սովորաբար, հեմոնխոզով վարակվելու պրոցեսը տեղի է ոմնենում աստիճանաբար, պարագիտների թիվը հետզետե ավելանում է և դրա հետևանքով, մանավանդ կենդանու կերակրման, պահպանման ու խնամքի գործի վատ դրվածքի դեպքում, առաջ են գալիս հյուծվածություն, լորձաթաղանթների գունատություն, ծնոտի և

կրծքի տակ այտուց (ուսուցք), ընդհանուր թուլություն, սննդառության խանգարում, վատ ախորժակ, ստամոքսի և աղիքների փառանք, փորլուծ և այլն: Երթեմն փորլուծը կարող է տեսել մինչև մեկ ամիս: Փորլուծությամբ տառապող կենդանիների կղկղանքը հեղուկանում է, պոշը և ետևի ոտքերը կեղտոտված են, նկատվում է նաև պարալիզ, ջղաձգություն: Հիվանդության ուժեղ արտահայտության ժամանակ կենդանիները պառկում են և մի քանի օր այլևս չեն կարողանում ոտքի ելնել և շրջապատի նկատմամբ միանդամայն անտարբեր վիճակում մահանում են: Երկար պառեած մնալու հետևանքով կենդանու վրա առաջանում են պառկելախցեր, որոնք հիվանդության ընթացքն ավելի են բարդացնում: Զերմությունը, սրտի աշխատանքը, շնչառությունը մեծ մասամբ նորմալ են կամ մի քիչ բարձր և արագացած:

Ոչխարների, այծերի կամ նրանց մատղաշի մեջ մահացությունն սկսվում է վարակումից մեկ-երկու, երրեմն էլ 5—6 ամիս հետո: Մահացությունները տեղի են ունենում գլխավորապես աշնան վերջին, ձմռանը և հատկապես գարնանը: Երբեմն հեմոնխոզը կարող է բարդանալ ուրիշ ճիճվային հիվանդություններով, կամ այնպիսի վարակիչ հիվանդություններով, որոնք համաճարակի ընթացքի վրա բացասաբար են անդրադառնում:

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Հեմոնխոզի ճշգրիտ ախտորոշումը կատարվում է մահացած կենդանիների դիահերձումների տվյալների կամ մորթված կենդանու հետազոտության հիման վրա: Եթե շրդանում հեմոնխուսաներ գտնվեն, ապա դրանք հեմոնխոզ հիվանդության իսկական ապացուցն են, սակայն դիակը հետազոտելու ժամանակ աշքաթող շպետք է անել ուրիշ հիվանդությունների հատուկ ախտաբանական նշանները, որոնք կարող են գուգակցել այս հիվանդությանը (ուրիշ ճիճվային հիվանդություններ, արյունահոսային սեպտիցիեմիան և այլն): Հեմոնխոզի ժամանակ առանձնապես աշքի է ընկնում դիակի հյուծվածությունը, թաղիքի տեսք թողնող հեմոնխուսաներով՝ ախտահարված շրդանը, հիվանդ անասունների խիստ հյուծվածությունը և այլն: Եթե դանակի բութ կողմով շրդանի լորձաթաղանթի վրայից հեռացնենք պարագիտներին, ապա կտեսնենք, որ նա բորբոքված է և ծածկված բազմաթիվ արյունազեղումներով:

Ոշխարների կղկղանքի լաբորատոր հետազոտությամբ կարելի է հեմոնխուսի ձվեր հայտնաբերել, սակայն մյուս տրիխոստրոն-գիլիդների ձվերից նրանց տարբերելը համարյա անհնար է, որովհետև դրանք միմյանց շատ են նման:

Կղկղանքում գտնված ձվերից կարելի է թրթուրներ աճեցնել, որ հեշտությամբ հաջողվում է, սակայն նրանց ուրիշ տրիխոստրոն-գիլիդների թրթուրներից տարբերելը նույնպես դժվար է: Այդպիսի հետազոտություններ կարելի է կատարել միայն հատուկ հելմինթուոգիական լաբորատորիաներում:

ՊԱՅՔԱՐԾ՝ ՇՐԴԱՆԻ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ՝ ՀԵՄՈՆԽՈՉԻ ԴԵՄ

Շրդանի ճիճվային հիվանդության՝ հեմոնխոզի դեմ պայքար տարվում է բուժական մշակումների (գեհելմինթիդացիա) և պրոֆիլակտիկ (նախազգուշական) միջոցառումների կիրառմամբ:

Հեմոնխոզի բուժման համար բազմաթիվ միջոցներ են գործադրվել, սակայն մինչև այժմ շրդանի բոլոր պարագիտներին ոչնչացնող դեղանյութեր չեն հայտնաբերվել: Այդ հիվանդության բուժման գործը դժվարանում է նաև այն պատճառով, որ որոճող կենդանիների ստամոքսը բարդ կառուցվածք ունի և հաճախ կենդանում տրված դեղանյութերը կանգ են առնում նախաստամոքսներում, որտեղ նրանց մի մասը ներծծվում է, իսկ մյուս մասը, երբեմն որոշ քիմիական փոփոխությունների ենթարկվելով, կորցնում է իր հակապարագիտային հատկությունները: Այդ է պատճառը, որ հեմոնխոզի բուժման գործը երբեմն հաջողություն չի ունենում: Բուժման ժամանակ անհաջողություններից խուսափելու համար վերջին ժամանակներս դեղանյութերը տրվում են շպրիցի կամ խոլի ապարատի միջոցով (խոլի ապարատի նկարագրությունը տես «պայքարի միջոցները մոնիեզիոզի դեմ» գլխում):

Հեմոնխոզի բուժման ժամանակ լավ արդյունք ստացվում է ածխածնի քառաքլորատ դեղանյութի գործածությունից, որը 6—12 խոր. սմ. դոզայով գործադրելու դեպքում ոչնչացնում է շրդանի գրեթե բոլոր պարագիտներին: Սուկայն, այդպիսի մեծ դոզայով գործադրությունը կարող է կենդանում մահ պատճառել, և հենց այդ պատճառով այդ դեղանյութը լայն գործածություն չունի:

Հեմոնխողի բուժման համար լայն գործածություն է գտել պղնձարջասպի 1 կամ 1,125% լուծույթը, որը բավական լավ բուժական արդյունք է տալիս:

Պղնձարջասպի լուծույթի պատրաստման և գործածության տեխնիկան ու դոզաները նկարագրված են «Պայքարի միջոցները մոնիթերով» դիսպասապատճենում: Տարբերությունը կայանում է նրանում, որ հեմոնխողի բուժման ժամանակ ոչխարներին և այծերին պղնձարջասպի լուծույթ խմացնելուց հետո լուծողական չի տրվում:

Ոչխարների հեմոնխողի և շրդանի մյուս արիխոսարոնդիլիդողների բուժման համար վերջին տարիներս գործադրվում է ֆենոտիազին գեղը, որը լավ բուժական արդյունք է տալիս: Ֆենոտիազինը ազուր և ծծումբ պարունակող մի նյութ է, գեղին կամ կանաչավուն գույնի թեթև փոշի, որը ջրի մեջ չի լուծվում:

Այդ գեղի դոզան ոչխարների հեմոնխողի բուժման համար հաշվում են հետեւալ կերպ՝ ամեն մի կիլոգրամ կենդանի քաշի համար վերցնում են 0,5 գրամ: Միջին թիվով, շափահաս ոչխարներին տալիս են 15-ից մինչև 25 գրամ, իսկ 6 ամսականից մինչև մեկ տարեկաններին՝ 10-ից մինչև 15 գրամ:

Ֆենոտիազինը ոչխարներին տալիս են բոլուսների մեջ, որոնք պատրաստում են ալյուրի կամ թեփի հետ ջրով խառնելու միջոցով:

Ֆենոտիազինը կենդանու օրգանիզմից արտաթորվում է մեղի հետ. նա մեղին կարմիր գույն է տալիս: Մեղի կարմրությունը 2—3 օրից հետո անցնում է:

Ֆենոտիազինը ոչխարների օրգանիզմի վրա ոչ մի բացասական ազդեցություն չի թողնում: Շրդանի ճիճուները այս գեղի ազդեցությունից շուտով ոչնչանում են և կղկղանքի հետ հեռանում, մեղի հետո անցնում է:

Ֆենոտիազինով բուժում կատարելուց հետո սովորաբար ոշընշանում են ոչխարների շրդանի գրեթե բոլոր ճիճուները: Մեր դիտողությունները ցույց են տվել, որ հեմոնխողով սաստիկ ախտահարված հոտերում, ուրեմն օր, մինչև ճիճվահանում կատարելը, տեղի էին ունենում ոչխարների մահացության շատ դեպքեր, ֆենոտիազինով մասսայական բուժում կատարելուց հետո մահացության դեպքերը հեմոնխողից դադարել են:

Մի քանի դիտողություններ ցույց են տվել, որ ոչխարներին 2—3 ամսվա ընթացքում ամեն օր ֆենոտիազին տալուց հետո, հե-

մոնխողը և մի քանի ուրիշ ճիշճային հիվանդությունները կանխալել են:

Ներկայումս կատարվում են գիտա-հետազոտական աշխատանքներ, որոնց նպատակն է պարզել ֆենոտիփինի նշանակությունը՝ այդ հիվանդությունները կանխելու գործում:

Հեմոնխողի դեմ բուժական մշակումներ անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ հիվանդության համաձարակի երեք ստորինաները:

Վերը նկարագրածից պարզվեց, որ հիվանդության սկզբնական շրջանում ոչխարների շրդանում մակարուծվող պարագիտների թիվն աննշան է լինում (մի քանի հատից մինչև 200 հատ). այդ բանը սովորաբար աշնանն է նկատվում: Այդ ստաղիայում, թեև հիվանդության նշաններ գեռմա չեն երևում, անհրաժեշտ է պրոֆիլակտիկ դեհելմինթիզացիա անցկացնել:

Երկրորդ շրջանում, թեպետ հեմոնխողի արտաքին նշաններով հիվանդներ համարյա թե չեն նկատվում, բայց ոչխարների շրդանում մակարուծվող պարագիտների թիվն ավելի շատ է լինում, քան սկզբնական շրջանում: Եթե հոտում նման նշաններով կենդանիներ հայտնաբերվեն, նրանց անհրաժեշտ է շուտափույթ կերպով բուժման ենթարկել: Այս դեպքում հոտից պետք է ընտրել բուժման ենթարկելու համար այն բոլոր կենդանիներին, որոնք հիվանդության արտաքին, թեկուղ և հազիվ նկատելի նշաններ են արտահայտում: Նրանց բուժական դեհելմինթիզացիայի ենթարկելիս պետք է անպայման պահպանել դեհելմինթիզացիայի ընդհանուր կանոնները:

Մեր նկարագրած կլինիկական (արտաքին) նշանները բնորոշ են այս հիվանդության երրորդ շրջանի համար: Այս դեպքում դեհելմինթիզացիան ձեռնարկվում է առանց ձգձգումների, անկախ տարվա եղանակից: Դեհելմինթիզացիան յուրաքանչյուր հոտի նկատմամբ առանձին է կազմակերպվում: Բոլոր դեպքերում, բուժման համար գործադրվում է պղնձարջասպի 1 կամ 1,125 % լուծույթ, կամ ֆենոտիփին դեղը:

Երեսմ մոնիեղիողով վարակված դառները միաժամանակ վարակված են լինում նաև հեմոնխողով: Այդիսի դեպքերի մասին ՍՍՌՄ-ի Հողժողկոմատի Անասնաբուժական գլխավոր վարչու-

թյան հրահանգը դեհելմինթիղացիայի հետևյալ կարգն է նախա-
տեսում՝

ա) եթե մոնիեղիողն ու հեմոնխողն ըստ ախտահարման աս-
տիճանի (ինտենսիվության) տարբերել միմյանցից անկարելի է,
այդ դեպքում դեհելմինթիղացիան կատարվում է ինչպես մոնիեղի-
ողի ժամանակ, այսինքն՝ պղնձարշասպի լուծույթ խմացնելուց հե-
տո, լուծողական է տրվում, իսկ երկու շաբաթից հետո նույն
դողաներով պղնձարշասպի լուծույթ է տրվում առանց լուծողա-
կանի.

բ) եթե մոնիեղիողը հանդիպում է 30—40 %-ից ոչ ավելի,
հեմոնխողի տարածվածության և խիստ արտահայտվածության
դեպքում, դեհելմինթիղացիան կատարվում է ինչպես հեմոնխողի
ժամանակ, այսինքն՝ պղնձարշասպի լուծույթ տալուց հետո լուծո-
ղական չի տրվում.

գ) իսկ եթե մոնիեղիողով մեծ տոկոսն է վարակված, դեհել-
մինթիղացիան անց է կացվում այնպես, ինչպես մոնիեղիողի
նկատմամբ է նշված:

Հղի կենդանիներին դեհելմինթիղացիայի ենթարկել պետք է
մեծ զգուշությամբ: Եթե մինչև ծնելը մնում է մինչև մեկ ամիս ժա-
մանակ, ապա նրանց դեհելմինթիղացիայի ենթարկել չի կարելի:

ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԵՄՈՆԽՈԶԻ ԴԵՄ

Հեմոնխողի համաձարակի դեմ ուղղված պրոֆիլակտիկ միջո-
ցառումների ձեռնարկումը խոշոր նշանակություն ունի: Հայտնի է,
որ հեմոնխողի համաձարակները առաջ են գալիս անձրևային տա-
րիներին, կամ ոչխարներին ճահճացած արոտավայրերում
արածացնելուց: Պրոֆիլակտիկ միջոցառումների էությունը կայա-
նում է զլիավորապես նրանում, որ արոտավայրերը, ջրելատեղե-
րը, շենքերը, փարախները և այլն ճշգրիտ և նպատակահարմար
ձևով օգտագործվեն և դրանով իսկ ճիճվաղերծման ենթարկվեն:

Հատուկ կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ,
եթե ոչխարները հինգ օրը մեկ անգամ նոր, այդ տարում չօգտա-
գործված արոտամաս փոխադրվեն, նրանք հեմոնխողով չեն վա-
րակվի, որովհետև այդ ժամանակամիջոցում արտաքին միջավայ-
րում (արոտավայրում)թթվուրները դեռ վարակիչ աստիճանի հա-

սած չեն լինում, քանի որ նրանց ինվազիոն դառնալու համար պահանջվում է 5—6 օր: Եթե հինգ օր անցնելուց հետո ոչխարներին ուրիշ արոտամաս տեղափոխենք, թրթուրներն այլևս իրենց տերերին՝ ոչխարներին չեն հանդիպի և կոչնչանան: Դրա համար անհրաժեշտ է արոտավայրը բաժանել մասերի և յուրաքանչյուր արոտամասն օգտագործել հինգ օր, որից հետո, այդ տարի, տվյալ արոտամասն այլևս ոչխար չտանել: Այն դեպքում, երբ անտեսությունն արոտով ապահովված չէ, թույլատրվում է մեկ անգամ օգտագործած արոտամասում նույն տարի ոչխարներ արածացնել միայն 2,5—3 ամիս անցնելուց հետո: Գառներին նույնպես պետք է առանձին արոտավայր հատկացնել:

Ոչխարներից և այծերից հետո օգտագործված արոտամասում թույլատրվում է ուրիշ կենդանիներ արածացնել (ձիեր, ուղտեր և այլն), իսկ խոշոր եղջերավոր անասուններ արածացնել կարելի է ոչխարներից և այծերից առաջ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ջրելու գործի վրա: Ոչխարներին կարելի է ջրել աղբյուրի, արագահոս գետերի և գետակների, ջրհորի և ջրմուղի ջրով: Ջրել պետք է փայտե կամ քարե հատուկ տաշտերից, սակայն անհրաժեշտ է հետեւ, որպեսզի տաշտերից թափված ջուրը չճահճանա, որովհետեւ այդպիսի խոնավ գետինը հելմինթների ձվերի և թրթուրների զարգացման համար բարենպաստ միջավայր կարող է հանդիսանալ:

Կանգնած, ճահճացած լճակների, դանդաղահոս առուների ջրի օգտագործումը վտանգավոր է: Այդպիսի տեղերում թրթուրներն արագ և անարգել զարգանալով, կարող են շուտով վարակիչ աստիճանի հասնել:

Ոչխարների գոմերը, փարախները, աղաները պետք է պահել մաքուր, գոմաղբը հավաքել և գոմաղբանոց փոխադրել և այնտեղ մշակել ինքնայրման մեթոդով (տես «Ֆասցիոլոգի դեմ միջոցառումները»):

Տափաստաններում և ձմեռային արոտավայրերում, որտեղ չուրը սակավ է և ոչխարներին, ստիպված, միևնույն ավագանից կամ ջրամբարից են չուր տալիս, անհրաժեշտ է վերցիններիս մոտակայքը պարբերաբար մաքրել, աղբը (կղկղանքը) հավաքել և հեռացնել առանձին տեղ: Զպետք է թույլ տալ, որ ոչխարները չըամբարների մոտ երկար մնան: Այն դեպքերում, երբ ոչխարների

աղալը, հանգստյան տեղը միևնույնն է և երկար ժամանակ անընդհատ օգտագործվում է, նա նույնպես կարող է ճիճուների ձվերով պատավորվել. ուստի անհրաժեշտ է նրա տեղը հաճախակի փոփոխել (արոտային սեղոնում 2—3 անգամ) և արգելել, որ նրա մոտակայքում ոչխարներ արածեն, որովհետև այնտեղ վարակիչ աստիճանի թրթուրները կարող են շատ լինել; Ոչխարներին շարունակ միևնույն ճանապարհով արոտավայր տանելն ու վերադարձնելը նույնպես վտանգավոր է: Անհրաժեշտ է ճանապարհը նույնպես փոփոխել:

Պետք է խուսափել (Ճանավանդ աշնան դեմ) ոչխարներին առավոտյան ցողի վրա արածացնելուց, որովհետև ինվազիոն թրթուրներից շատերը ցողի ժամանակ խոտերի ցողունների վրա են բարձրանում: Այդպիսի խոտ արածելով ոչխարները կարող են հեմոնխոտաների, ինչպես նաև ուրիշ պարագիտային ճիճուների ինվազիոն թրթուրներով ախտահարվել:

Այս բոլոր հանդամանքները հաշվի առնելով և հիվանդության դեմ համապատասխան բուժական և պրոֆիլակտիկ միջոցառումները անապահով տնտեսությունում սիստեմատիկար կիրառելու միջոցով մենք կարող ենք ո՛չ միայն կանխել հեմոնխոզի համաճարակները, այլև այդ հիվանդությունն իսպառ վերացնել ոչխարաբուծական տնտեսություններում:

6. ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՅԾԵՐԻ ԴԻԿՏԻՈԿԱՊԻԼՈԶ ԹՈՔԱՑԻՑՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ոչխարների և այծերի դիկտիոկառուզը նրանց թոքերում (բրոնքներում) մակարուծվող դիկտիոկառուզա ցեզի կլոր ճիճուների շնորհիվ է առաջանում, որ բնորոշ է թոքերի և մասնավորապես բրոնքների բորբոքումով:

Դիկտիոկառուզ հիվանդությունը երևան է գալիս համաճարակի կամ ձգձգվող, առանձին դեպքերի ձևով և խոշոր մահացությունների ու կորուստների պատճառ է դառնում:

Բացի դիկտիոկառուզից, մանր եղչերավոր անասունները հածախ տառապում են նաև ուրիշ թոքածիճիլային հիվանդություններով: Դրանք են՝ սինթետոկառուզը, մյուկերիոզը, ցիստոկառուզը, որոնք տարածված են միքանի ոչխարաբուծական տնտեսություն-

ներում և, որոշ դեպքերում, կարող են խոշոր համաճարակի պատճառ դառնալ: Այդ թոքաճիճվային հիվանդությունների բնորոշ հատկանիշը նույնպես թոքերի խրոնիկ բորբոքումն է, որպասին, սաստիկ ախտահարման դեպքում, երբեմն սուր, իսկ երբեմն՝ հնահասուր ձեերով է արտահայտվում:

Սինթետոկառլոզը, ցիստոկառլոզը և մյուզերիոզը գլխավորապես ցածրագիր կամ նախալեռնային վայրերի ոչխարաբուծական տնտեսություններում են տարածված, որովհետև այդ հիվանդությունների հարուցիչների թրթուրներն արտաքին միջավայրում վարակիչ աստիճանի հասնելու համար պահանջում են միջնորդ տերեր, որպասինները զանազան տեսակի ցամաքային խիստնջներն են հանդիսանում և, ավելի շատ, ցածրագիր նախալեռնային վայրերում են հանդիպում:

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ԴԻԿՏԻՈԿԱՊԵԼՈԶԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՃԱՐԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Ոչխալեռների և այծերի դիկտիոկառլոզն ամենատարածված չիճվային հիվանդություններից մեկն է և նկատվում է գրեթե բոլոր երկրներում: Հետազոտություններով ու ստուգումներով ապացուցված է, որ դիկտիոկառլոզը լայն տարածում ունի առանձին տնտեսություններում, որպասին կարող է հասնել մինչև 70—90%/₀-ից ավելի, դառնալով խոշոր մահացությունների պատճառ:

Երբեմն, դիկտիոկառլոզ թոքաճիճվային հիվանդությունն այնքան սաստիկ է արտահայտվում, որ ոչխարաբուծական տնտեսություններն իրենց, հատկապես մատղաշ (մինչև մեկ տարեկան հասակի), գլխաքանակի մինչև 50% և ավելին կարող են կորցնել: Ցարական Ռուսաստանի հարավային մասերում 1868 թ. դիկտիոկառլոզի հետևանքով հարյուրավոր և հազարավոր ոշխարներ են կոտորվել: Ցարավային Աֆրիկայում, Ամերիկայում, Ավստրալիայում և այլ երկրներում այս հիվանդության պատճառած համաճարակները հաճախակի են և հսկայական կոտրած են առաջ բերում և ալլն:

Դիկտիոկառլոզ հիվանդության պատճառած վնասների շափր միայն մահացություններով չի սահմանափակվում: Վարակված կենդանիներից շատ-շատերը հյուծվում են և հեշտությամբ այլ հիվանդության պատճառած համաճարակները հաճախակի են և հսկայական կոտրած են առաջ բերում և ալլն:

Հանդություններով հիվանդանում: Բրդի մթերատվությունը պակասում է և որակն էլ ցածրանում: Ոչխարների կաթը պակասում է, իրենց գառներին նույնիսկ չի բավարարում, որի պատճառով գառները քաղցած մնալով՝ ուրիշ ոշխարների են ծծում, բայց նորմալ սնունդ շատանալով շատ շուտ նիշարում, հյուծվում են և ենթարկվում ուրիշ հիվանդությունների:


Հիվանդ ոշխարների մսի որակն էլ շատ ցածր է. նրանք հյուծված են և այտուցներով են առապում (ծնոտի և կրծքի տակ): Անձրևային տարիներին դիկտիոնապոզի համաձարակն առաջանում է ավելի հաճախ, մատղաշները շեն դիմանում և նրանց մեջ մահացությունն ավելի մեծ է լինում:

ԴԻԿՏԻՈԿԱՌԻԼՈԶԻ ՀԱՐՈՒՑՉԻ ՀԱՄԱՌՈՅ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանիների դիկտիոնապոզ թոքաճիճվային հիվանդության հարուցիչները դիկտիոնապուս ցեղի կլոր ճիճուններն են: Մանր եղջերավոր անասունների դիկտիոնապոզի հարուցիչը՝ դիկտիոնապուս ֆիլարիա թոքաճիճուն նույնպես այդ ցեղի պարագլուխություններից է:

Ոշխարների և այծերի դիկտիոնապուս պարագլուխությունները կլոր, բարակ, թելանման, սպիտակ գույնի ճիճուններ են: Արու պարագլուխուններն ավելի փոքր են, քան էգերը, ինչպես առհասարակ նկատվում է այդ բոլոր կլոր ճիճունների մեջ: Արու պարագլուխունների երկարությունը հասնում է 3—8 սանտիմետրի: Եթե այդ պարագլուխունը դիտենք խոշորացուցով կամ միկրոսկոպով, կտեսնենք, որ նա իր գլխի ծայրում թերի զարգացած բերանի փոքր պատիշ ունի: Արու պարագլուխը պոչի ծայրում ունի սեռական պարկով (բուրսա), որի մեջ պարփակվում են մկանային կազմություն ունեցող կողեր:

Բացի այդ, արու պարագլուխուններն ունեն երկու քստիկներ կամ սպիկուլներ, որոնք գեղնագորշ են և մի քիչ ծոված: Թի՛ սեռական բուրսան, և թե սպիկուլները նրա համար են, որպեսզի արու պարագլուխը, դրանց օգնությամբ, զուգավորման ժամանակ կարողանա է գին մոտեցնել իրեն: Եգ դիկտիոնապուսներն արուներից ավելի հաստ են և երկար: Նրանց երկարությունը համնում է 10—15 սանտիմետրի: Սովորաբար էգ պարագլուխունների արգանդը մեծ քանակու-



Նկ. 12. Ոչսարի դիկտիոնիառվուս

1. Արույի պոչը,
2. Արույի սեռական պարկուկը,
3. էզի գլխածայրը,
4. էզի պոչը,
5. Զուն:

թյամբ ձվերով է լինում լցված, որոնք ծածկված են նուրբ թաղանթով: Արգանդից նոր գուրս եկած ձվերի մեջ թրթուրն արդեն ձևակերպված է լինում: Էզ պարագիտների պոչը սրված է: Նրանց արտաքին սեռական անցքը, կամ, ինչպես անվանում են, վուլվան գտնվում է պարագիտի մարմնի առջևի կիսի վրա:

Այս պարագիտները մակարուժվում են ոշխարների և այծերի թոքերի շնչառական խողովակներում (բրոնքներում):

ԴԻԿՏԻՈԿԱՊԻԼՈՒՄԻ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

Ոշխարների գիկտիոկառլուս թոքաճիճուն իր զարգացման ցիկլը (շրջանառությունը) անց է կացնում հետևյալ ձևով: Էդ պարագիտները ձվեր են դնում, որոնք թոքերի շնչառական խողովակների (բրոնֆների) լորձի հետ խառնվելով բարձրանում են դեպի շնչափողը: Կենդանու հաղալու կամ խմելու ժամանակ ձվերը լորձի հետ միասին դուրս են գալիս նրա բերնի խոռոշը: Զվերի մի մասը հաղալու ժամանակ կարող է բերնից դուրս ընկնել, իսկ մեծ մասը կենդանին լորձի հետ միասին կուլ է տալիս: Կուլ տված ձվերն ընկնում են ստամոքսի մեջ, իսկ այնտեղից՝ կերանյութերի հետ միասին՝ բարակ, այնուհետև՝ հաստ աղիքները: Այստեղ ձվերից թրթուրներ են դուրս գալիս, որոնք կենդանու կղկղանքի հետ միասին ընկնում են արտաքին միջավայր:

Ոշխարների գիկտիոկառլուսի նոր դուրս եկած թրթուրները պարու աշքով անտեսանելի են: Նրանց երկարությունը կես միլիմետր է, կամ մի քիչ ավելի: Գլխածայրում թրթուրները կոճակի նման ուսուցք ունեն:

Արտաքին միջավայր նոր դուրս եկած թրթուրները ոշխարներին կամ այծերին վարակել չեն կարող: Նրանք սկզբում շատ արագաշարժ են, իսկ երկու օրից հետո թրթուրների շրժունակությունն աստիճանաբար նվազում է և նրանք, մանգաղի ձև ընդունելով, գրեթե անշարժանում են: Դրանից հետո թրթուրները պարաստվում են շապիկ հանելու (կերպարանափոխավելու): Այդ ժամանակ նրանց մաշկաթաղանթը անջատվում է մարմնից: Դեռ առաջին շապիկը չհանած թրթուրները նորից աշխատանում են և նկատվում է նրանց ուժգին շարժունություն: Հետո, ավարտելով առաջին շապիկահանությունը՝ անցնում են երկրորդ շապիկահանության: Երկրորդ շապիկահանությունը տեղի է ունենում ոչ շուտ, քան 4—6-րդ օրը, նայած արտաքին միջավայրի շերմությանը: Այդ ժամանակ թրթուրներն առաջին շապիկից դուրս են զալիս և մնում երկրորդում: Այդպիսով, դիկտիոկառլուսի թրթուրներն արտաքին միջավայրում երկու անգամ շապիկահանություն են կատարում և այդ ժամանակից ի վեր վարակիչ (ինվագիոն) հատկություն են ձեռք բերում: Վարակիչ թրթուրները մի քիչ ավելի մեծացած են և սաստիկ շարժում: Եթե այդպիսի թրթուրներն ընկնեն

կենդանու օրգանիզմը, կարող են այնտեղ իրենց զարգացումը շարունակել և թոքերը հասնելով սեռահասուն պարագիտ դառնալ:

Արտաքին միջավայրում թրթուրների զարգացումը կախված է շերմաստիճանից և խոնավությունից, ավելի բարենպաստ պայմաններում նրանց զարգացումը՝ հասունացման ժամանակամիջոցը կարծ է տևում, սակայն վեց օրից ոչ պակաս, իսկ այլ դեպքերում՝ այդ ժամանակամիջոցը կարող է տևել նույնիսկ մինչև 18 օր:

Բաղմաթիվ փորձերն ու դիտողություններն ցույց են տալիս, որ դիկտինկառվուսի թրթուրներն իրենց զարգացման համար պահանջում են խոնավ միջավայր: Ձրում, գոմալբաջրում, գոմալբրում նրանք կարող են ազատ 30—90 օր ապրել: Դեռ շապիկ չհանած, կամ առաջ ն շապկահանումն ավարտած թրթուրները չորությանը երկար դիմանալ չեն կարող և շուտով ոչնչանում են: Ընդհակառակը, երկրորդ շապկահանումն ավարտած և վարակիչ հատկություն ձեռք բերած ինվազիոն թրթուրները չորությանը, ցրտին և սառնամանիքին դիմանում են մինչև 15 օր: Անբարենպաստ պայմաններում, վարակիչ աստիճանի թրթուրները ժամանակավորապես թմրում, ընկնում են կիսակենդան դրության մեջ (անաբրիոզ) և այդ վիճակում կարող են արտաքին միջավայրում ապրել մինչև մեկ տարի: Այդպիսի կիսակենդան դրությունից նրանց վերակենդանացումը կարող է տեղի ունենալ միջավայրը խոնավանալու դեպքում:

Բարձր ջերմությունը (60 աստիճան) թրթուրներին շուտով սպանում է:

Ախտահանիչ նյութերի հանդեպ դիկտինկառվուսի թրթուրները բավական կայուն են, սակայն յոդի 1 % ջրային լուծույթը մի քանի վայրկանում ոչնչացնում է նրանց:

Սկզբում մենք ասացինք, որ թրթուրները, մանավանդ վարակիչ աստիճանի հասածները, բավական շարժունակություն ունեն: Փորձերով ապացուցված է, որ նրանք, շնորհիվ իրենց շարժունակության, կարող են հեշտությամբ բույսերի, կանաչ խոտերի ցողունների վրայով բարձրանալ դեպի վեր, կամ, ինչպես ասում են, ուղղահայաց գաղթ (միգրացիա) կատարել:

Բույսերի վրա նրանք առավոտները հայտնաբերվում են մեծ քանակությամբ, իսկ կիսօրին և երեկոյան՝ աննշան քանակու-

թյամբ: Միաժամանակ պարզված է, որ թրթուրների մեծ մասը գտնվում է բուշերի արմատամերձ մասերում: Այս հանդամանքն ապացուցում է, որ ոչխարների դիկտիոնալուզով վարակվելու հնարավորությունն արոտավայրում մեծ է:

ԹՐԹՈՒՐՆԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՌԶԽԱՐԻ ԹՐԳԱՆԻՉՄՈՒՄ

Վարակիչ աստիճանի հասած թրթուրներին կենդանին կուլ է տալիս ջրի և կերի միջոցով. նրա աղիքներում թրթուրները թողնում են իրենց երկրորդ շապիկը և աշխույժ շարժումներով բարակ կամ հաստ աղիքների պատերը ծակում և ավշային անոթների մեջ մտնում: Այդտեղից, ավշի հոսանքով անցնում են միջընդերքային ավշագեղձերը: Այստեղ, նրանք շապիկ են հանում և շարունակելով իրենց ճանապարհը (գաղթը) ավշային անոթներով՝ հասնում են սիրտը, որտեղից արյան հոսանքով դալիս, հասնում թոքերի մազանոթները: Մազանոթներում նրանք կանգ են առնում, ճեղքում են նրանց պատերը և մտնում բրոնքների մեջ, ապա շարունակելով իրենց զարգացումը, դառնում են սեռահասուն պարագիտներ: Այդ բոլորը տեսում է 25—40 օր:

Ոչխարների դիկտիոնալուզով վարակումը տեղի է ունենում գլխավորապես արոտավայրերում, ջրելատեղերում, ուր ճահճուտներ կամ կանգնած ջրեր կան, աղալների մոտերքում և այլն: Մի խոսքով, վարակման հնարավորությունը մեծ է այնպիսի տեղերում, որտեղ թրթուրների զարգացման համար արտաքին միջավայրում համապատասխան հնարավորություններ կան և ոչխարներն այդպիսի տեղերի հետ մեծ շփում ունեն:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Վերը նկարագրածից պարզվեց, որ վարակիչ աստիճանի թըրթուրները ոչխարների օրգանիզմն ընկնելով, աղիքների պատերը ծակում, անցնում են ավշագեղձերը և, այնուհետև, թոքերի արյունատար մազանոթները ճեղքելով անցնում են բրոնքները և այնտեղ մշտական բնակություն հաստատում: Անկասկած, նրանք իրենց այդպիսի գաղթ կատարելու շնորհիվ, այդ օրգաններում որոշ փո-

փոխություններ են առաջացնում, որոնք հաճախ մնում են աննկատելի: Դիկտիոնառվուանների պատճառած հիմնական հիվանդագիններութիւնները տեղի են ոմանում թոքերում: Այստեղ, նրանք բրոնքների լուսանցքն զբաղեցնելով առաջ են բերում բորբոքում, որի հետևանքով բրոնքները լցվում են լորձաթարախային թանձր հեղուկով, խցանվում-փակվում են և դրանով իսկ խանդարում շընշառությունը: Այս դեպքում թոքերի ախտահարված հատվածները շարժից գուրս են գալիս, բորբոքվում, պնդանում և նույնիսկ հետաձման են ենթարկվում:

Դիկտիոնառվուաններն իրենց կենսագործունեության շնորհիվ թունավոր նյութեր՝ տոքսիններ են արտադրում, որոնք ծծվելով արյան մեջ, կենդանու արյան վրա քայլայիշ ազդեցություն են գործում:

Բացի այս, զիկտիոնառվուաի թրթուրներն իրենց գաղթի ժամանակ վիրավորում են աղիքների լորձաթաղանթը, ավշագեղերը և թոքերը, որի շնորհիվ զանազան վարակիչ կամ թարախածին միկրոբների համար դեպի օրգանիզմ մուտք է բացվում:

Հիվանդության ուժգին և սուր արտահայտությունը կախված է, պարագիտների քանակությունից. որքան նրանց թիվը մեծ է, այնքան ուժեղ է արտահայտվում հիվանդությունը, իսկ փոքրաթիվ պարագիտները թույլ, երկարատև հիվանդություն են առաջացնում: Երբեմն նրանց թիվը մեկ կենդանու թոքերում կարող է հասնել մի քանի հարյուրների:

Մատղաշ անասունների վրա հիվանդությունը համեմատաբար ավելի սուր է արտահայտվում, քան մեծահասակ ոչխարների վրա: Անապահով հոտում գտնվող թույլ և նիհար կենդանիները դիկտիոնառվողի առաջին զոհերն են դառնում: Երբեմն թոքերի բորբոքումն ամբողջ հատվածներ է ընդգրկում, երբ զանազան վարակիչ կամ թարախածին միկրոբների զարգացման համար լայն հարավորություն է ստեղծվում, որոնք հիվանդության ընթացքն ավելի են ծանրացնում:

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Դիկտիոնառվողից մահացած կենդանիների գիտակներում հիմնական փոփոխությունները գլխավորապես հայտնաբերվում են

Թոքերում: Ոչխարների դիակների հերձման ժամանակ նկատվում է, որ պարագիտները տեղավորված են մանր բրոնքներում, որտեղից նրանք հետո տեղափոխվում են ավելի մեծերը՝ երբեմն ձգված վիճակում, երբեմն էլ կծկված: Պարագիտները տեղավորված են լինում թոքերի ետևի բլիթներում. առջևի բլիթներում պարագիտներ սովորաբար քիչ են լինում, կամ համարյա չեն լինում: Բրոնքները լցված են մածոցիկ լորձով, իսկ տեղական թարախային օջախներ են հանդիպում: Բրոնքի ալշագեղերը մեծացած են, կրծքի և որովայնի խոռոչներում երբեմն շճահեղուկ է հավաքվում: Ծնոտի, պարանոցի և կրծքի տակ այտուցներ են նկատվում:


ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱԽՆԵՐԸ

Հիվանդության սկիզբը սովորաբար աննկատելի է մնում: Սուազին նշանները նկատվում են վարակվելուց մեկ-երկու ամիս հետո:

Հիվանդ ոչխարներն սկզբում չոր և կտրով հազ են ոմենում: Հետագայում հազը գնալով սաստկանում է և հազացող ոչխարների թիվը հոտում շատանում է: Հազն ավելի ուժգին է դառնում այն ժամանակ, երբ ոչխարներն սկսում են ման գալ: Դիտողությունները ցույց են տվել, որ առավոտյան, հոտը դուրս քշելու ժամանակ, հազն ավելի սաստիկ է դառնում, հոտի այս ու այն կողմից լսվում են հազի սաստիկ նոպաներ: Սաստիկ հազի ժամանակ, երբեմն, խորիսի հետ միասին դիկտիոկառլուպաների կծիկներ են խմբում, որոնց կենդանին մեծ մասամբ կուլ է տալիս: Հիվանդ կենդանիները հոտից ետ են մնում, դժվարությամբ շնչում, քթերից լորձաշնային հեղուկ է հոսում, բուրդը հեշտությամբ է պոկվում և այլն:

Եթե հիվանդ կենդանու կրծքին ականջ դնենք, կլսենք խոնավ խզզոց, որ երբեմն հեռալից էլ է լսվում: Հիվանդ կենդանու ջերմությունը մեծ մասամբ նորմալ է, բայց որոշ դեպքերում կարող է բարձրանալ մինչև $40-41^{\circ}$: Հիվանդությանը զուգընթաց, սատի-ճանաբար զարգանում են հյուծվածություն, սակավարյունություն, որոնք կենդանուն ուժասպառ են անում:

Հիվանդությունը շաբաթներ և նույնիսկ ամիսներ կարող է տևել, որից հետո կենդանին բոլորովին հյուծվում է և մահանում:



Նկ. 13. Դիկտիոնալ պատուղով ախտահարված ոչխարի բռքի մի մասը:

շնչահեղձ լինելով: Այն դեպքերում, եթե կենդանիների թոքերում պարագիտներ քիչ կան, որը վարակում տեղի չի ունենում, հիվանդները պատշաճ առողջապահական պայմաններում են գտնվում և, որ գլխավորն է, եթե անասունների կերակրման գործը լավ հիմքերի վրա է դրված, նրանց վիճակը հետզհետե բարվոքվում է և նրանք, արտաքուատ կարծես առողջանում են: Սակայն, թեև նրանք առողջ են թվում և հիվանդության նկատելի նշաններ չեն:

արտահայտում, այնուամենացնիվ, իրենց թոքերում որոշ թվով պարագիտներ են կրում, որոնք անընդհատ թրթուրներ են արտադրում: Այդպիսի կենդանիները, արտաքին միջավայրն ու արոտավայրը աստիճանաբար ախտավորելով, կարող են հետագայում նոր, կրկնակի վարակում և նույնիսկ համաձարակ առաջացնել:

Դիկտիոնակառողի անապահով տնտեսությունում մահացության դեպքերը կարող են եղակի լինել, սակայն շատ դեպքերում դիկտիոնակառողը մասսայական մահացությունների պատճառ է դառնում և տնտեսությանը հսկայական վնաս հասցնում: Նրանից առաջացած մահացությունը կարող է 10—75%-ի հասնել:

Հաճախ տեղաձարակը նկատվում է ձմրան սկզբին, գարնանը և անձրևոտ աշնանը:

Մահացությունները մեծ մասամբ տեղի են ունենում մինչեւ մեկ տարեկան դառների մեջ; Վատ կերակրման, վատ պահպանման ու խնամքի պայմաններում կենդանիները անհամեմատ ավելի դժվար են տանում հիվանդությունը, քան առողջապահական տեսակետից բարենպաստ պայմաններում:

Ա Խ Տ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Եթե վերը նկարագրված նշանները հուսում նկատվեն, ապա առաջին հերթին թոքածիճվային հիվանդության առկայությունը պետք է կասկածել, սակայն այդ նշանները համոզիչ լինել չեն կարող, քանի որ նրանք ուրիշ հիվանդությունների ժամանակ էլ կարող են նկատվել Դիկտիոնականապես պարզելու համար պետք է զեկավարվել մահացած կենդանիների դիահերձումների տվյալներով:

Դիկտիոնակառողի ախտորոշումը կատարվում է նաև կղկղանքը լաբորատոր քննության ենթարկելու միջոցով, երբ միկրոսկոպի օգնությամբ պարագիտի թրթուրներ են հայտնաբերվում:

Չպետք է մոռանալ, որ դիկտիոնակառողի հետ միաժամանակ կարող են զուգակցվել նաև ուրիշ հիճվային կամ վարակիչ հիվանդություններ: Դրա համար, նախ քան մասսայական միջոցառումներ ձեռնարկելը, պետք է մանրամասն ստուգում կատարել և ըստ այնմ պայքարի միջոցառումներ ձեռք առնել:

Ոչխարների հուսում, փարախում դիկտիոնակառողի տարած-

ման տոկոսը որոշելու համար պետք է ղեկավարվել կղկղանքի լաբորատոր քննության տվյալներով: Այդ նպատակով, յուրաքանչյուր հոտի 50 կամ 100 ոչխարից (նայած հոտի մեծությանը) պետք է կղկղանք վերցնել և այն լաբորատորիա ուղարկել քննության ենթարկելու համար: Կղկղանքը վերցնում են հետևյալ ձևով՝ հոտից առանձնացնում են 50-կամ 100 ոչխար, զրանցից յուրաքանչյուրի ուղիղ աղիքից վերցնում են կղկղանքի մի քանի գնդիկ (7—8 հատ) ու դնում տուփի մեջ, կամ փաթթաթում՝ մաքուր թղթում: Մի կենդանուց կղկղանք վերցնելուց հետո, նրան առանձնացնում են, իսկ մատները կրեոլինի թույլ լուծովկթով լվանում, ապա նույն ձևով վերցնում են մյուսից, այնուհետև նույն ձևով երրորդից, չորրորդից և այլն: Մատները չեղադութելու համար կարելի է գործ ածել ուղարինե մատնոցներ, որինք պետք է յուրաքանչյուր կենդանուց կղղկղանք վերցնելուց հետո հանել և աղադահանած նոր մատնոց հագնել: Վեր բած կղկղանքի նմուշներն անմիջապես պետք է փաթթել և վրան գրել տվյալ շրջանի, գյուղի կամ վայրի, տնտեսության, քրիգագի, հոտի անունը և անասնաբուժի կամ անասնաբուժակի գրության հետ միասին ուղարկել մոտակա անասնաբուժական լաբորատորիա՝ քննության ենթարկելու համար:

Ոչխարների կղկղանքը դիկտիոնկառուող ճիճվային հիվանդության նկատմամբ քննության ենթարկելիս՝ պետք է որոնել ոչխարի դիկտիոնկառուած թոքաճիճվի թրթուրը: Այդ նպատակի համար քննությունը կատարվում է Բերմանի կամ Վայդի մեթոդով:

Ստորև նկարագրվում է կղկղանքի քննության վայդի մեթոդը, որն ավելի մատչելի ենք համարում:

Կղկղանքի յուրաքանչյուր նմուշը (3—5 գնդիկ) դնում են ժամացուցի ապակու մեջ և վրան 5—6 խոր սմ աղբյուրի ջուր են ցցնում (25°—30°), երկու երեք ժամից հետո կղկղանքի գնդիկները մաքուր պինցետով զգուշությամբ դուրս են հանում, իսկ ժամացուցի ապակին հեղուկի հետ միասին դնում միկրոսկոպի տակ և հետազոտում փոքր խոշորացման սիստեմով:

Պետք է լավ իմանալ, որ ոչխարների թոքերում բացի դիկտիոնկառուած մակարուծվում են նաև ուրիշ թոքաճիճուներ (սխնթետոկառուած, մյուկերիուս և այլն), որոնց թրթուրներից նույնպես կարող են կղկղանքի մեջ լինել: Ոչխարի դիկտիոնկառուածի թրթուրը մյուս թոքաճիճուների թրթուրներից տարբերվում է նրանով, որ

ավելի մեծ է (0,500-ից մինչև 0,540 մմ երկարություն ունի), գըշ-խին կոճակի նման ելում ունի և ներքին օրգանները (աղիքը) պիգ-մենտավորված են: Մյուս թոքածիճումների թրթուրները դիկտիոնկա-ռոզուաի թրթուրից ավելի փոքր են և այլ կազմվածք ունեն: Նրանք իրենց գլխածայրում կոճականման ելուն չունեն, իսկ պոչերն այլ ձևի են:

Ոչխարների շրջանում և աղիքներում մակաբուծվող զանազան տեսակի կլոր ճիճունների ձվերը կղկղանքի հետ նույնպես դուրս են գալիս և կարճ ժամանակամիջոցում (նայելով միջավայրի ջերմությանը) նրանցից թրթուրներ են դուրս գալիս: Նրանցից շատերը նման են դիկտիոնկառոզուաի թրթուրներին: Սակայն վերջիններից նրանք տարբերվում են գլխավորապես նրանով, որ իրենց գլխածայրին կոճականման ելուն չունեն և տարբեր շափերի են, իսկ պոչի ծայրը ուրիշ ձևի է՝ մեծ մասամբ խիստ սրածայր:

Դիկտիոնկառոզի նկատմամբ լաբորատոր հետազոտություններեւ կատարելիս պետք է այդ առանձնահատկություններն ինկատի ունենալ և, որքան հնարավոր է, կղկղանքը հետազոտել թարմ վիճակում, այն է՝ վերցնելուց հետո նույն կամ հետևյալ առաջին-երկրորդ օրը:

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ԴԻԿՏԻՈՆԿԱՌՈՒԶԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Ոչխարների դիկտիոնկառոզը բուժելու համար բազմատեսակ գեղանյութեր են փորձարկվել, սակայն դրանցից շատերը բուժական բավարար արդյունք չեն տվել:

Վերջին ժամանակներս (1931 թ.), սովետական գիտնականներն առաջարկել են յոդի և յոդ-կալիումի լուծույթի ներշնչափողային ներարկում: Ներշնչափողային ներարկումներ դրանից առաջ էլ են փորձարկվել, բայց ներարկման ժամանակ կենդանու դիրքը հաշվի շառնելու պատճառով նրանք լավ արդյունք չեն տվել: Բանը նրանումն է, որ այդ պարագիտները մակաբուծվում են գլխավորապես թոքերի ետևի բլիթներում: Այդ ներարկումները կատարվել են կենդանու կանգնած դիրքում և ներարկված գեղանյութերը հոսել են գեպի թոքերի առջևի մասերը, որտեղ պարագիտներ համարյա չեն լինում: Հետագայում, բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ շնչափողի մեջ ներարկումներ անելիս պետք է ձգտել, որ



Նկ. 14. Շնչափողը և բռները ոչխարի տարբեր դիրքերում:

Ներարկվող գեղանյութը ոչ թե գեպի թոքերի առջևի, այլ գեպի նրանց ետևի մասերը գնա, այսինքն՝ այնտեղ, որտեղ զիկտիոնկառուսներն են գտնվում: Այդ նպատակին հասնելու համար անձրաժեշտ է կենդանուն համապատասխան դիրք տալ, այն է՝ նրան մեջքի վրա պառկեցնել այն հաշվով, որ նրա գլխի կողմը լինի բարձր, իսկ ետևի մասը՝ ցածր, որից հետո ներարկում կատարել: Այս ձևով ներարկելիս, գեղանյութը գոսում է գեպի նտեսերի մասերը գնա, որտեղ առջևում գտնվում է առաջնական գոտի մասը:



Նկ. 15. Ոչխարների ներշնչափողային
եւրարկումը:

Այդ ձևով ներարկում կատարելու համար օգտագործում են հատուկ դազգյա՞ն կամ տաշտակ: Դազգյա՞նի կամ տաշտակի մի ծայրը դնում են գետնին, իսկ մյուսը հենում պատին կամ դնում որևէ բարձրության վրա՝ այն հաշվով, որ 30° — 40° անկյուն ստացվի: Եթե բուժման ժամանակ այս կարևոր պայմանը հաշվի չառնվի կամ ճիշտ չկիրառվի, բուժումից մեծ արդյունք սպասել չի կարելի:

Ներարկման համար գործադրվում է բյուրեղային յոդի և յոդ կալիումի ջրային լուծույթ, որն այլ կերպ կուվում է կյուգովի լուծույթ:

Այդ լուծույթը պատրաստում են հետևյալ ձևով՝ վերցնում են յոդ բյուրեղային՝ 1 գրամ, յոդ կալիում՝ 2 գրամ, թորած ջուր՝ 1500 խոր. սմ, եթե թորած ջուր չկանոնավոր չէ, կարելի է օգտագործել լավ եռացրած ու քամած աղբյուրի ջուր:

Լուծույթը պատրաստելու համար վերցնում են անջրաժեշտ քանակությամբ բյուրեղային յոդ և յոդ-կալիում, լցնում մաքուր լցված 22ի կամ բաժակի մեջ, վրան մի քիչ թորած կամ եռացրած

զուր լցնում և խառնով, մինչև որ յոդն ու յոդ կալիումը լուծվին: Դրանից հետո ավելացնում են մնացած ջուրը, որից հետո լուծվիթը պատրաստ է գործածության: Լուծույթը պետք է պատրաստել ապակե մաքուր լվացած շնի մեջ միայն:

Այս լուծույթը ներարկում են շնչափողի մեջ, հետևյալ դողացով՝

Չափահաս ոչխարներին և այծերին 12—15 խոր. սմ
մեկ տարեկաններին 10 խոր. սմ
գառն երին 5—6 խոր. սմ

Պատրաստի լցուգոլի լուծույթը պետք է օգտագործել նույն օրը: Ներարկումը կատարվում է հետևյալ ձևով՝ ոչխարին պառկեցնում են դաղգյանի վրա այն հաշվով, որ նրա գլխի կողմը լինի բարձր, իսկ ետևի կողմը ցածր, մեջքի վրա և իրանը մի քիչ դեպի աշխեքված: Երկրորդ ներարկումը կատարում են հետևյալ օրը, նույն ձևով, սակայն այս անգամ ոչխարի իրանը թեքում են դեպի ձախ: Այսպիսով թոքերի երկու բլիթներն ել բուժման են ենթարկվում լցուգոլի լուծույթով:

Կարելի է նաև ոչխարների դիկտիոնալառուղի դեմ ճիճվահանումը կատարել միանգամից: Դրա համար, դաղգյանի վրա դեպի աշխեքված ոչխարին շնչափողին մեջ առաջին ներարկումը կատարելուց հետո, նրան թեքում են դեպի ձախ կողմը և երկրորդ անգամ ներարկումը կատարում վերը հիշված դողաներով: Ներարկումը ավարտելուց հետո, ոչխարին դաղգյանից զգուշությամբ ցածր են իջեցնում, կանգնեցնում ոտքերի վրա և բաց թողնում:

Դիկտիոնալառուղի դեմ դեհելմինթիզացիա անցկացնելիս, աշխատանքը լավ և արագ կատարելու համար ամեն մի անասնաբուժին կամ անասնաբուժակին պետք է օգնեն մի քանի հոգի, մեկը ոչխարի գլուխը բռնելու, մեկը ներարկման տեղն ախտահանելու, երկուսը՝ ոչխարի ոտքերը բռնելու, մեկն էլ ասեղներ մատուցելու համար, մեկ-երկու հոգի էլ ոչխարներին դաղգյանի մոտ բերելու և ներարկածներին հեռացնելու համար:

Թարմ պատրաստած լցուգոլի լուծույթը փակ ապակյա ամանով դրվում է ներարկողի մոտ, որը սետինե խողովակով լուծույթը լցնում է շպրիցի մեջ և ներարկում ոչխարներին: Լավ է այդպիսի դեպքերում օգտագործել Աղալի ծորակ, որն աշխատանքը բավական արագացնում է:

Դեհելմինթիզացիայի գործն այս ձևով կազմակերպելու դեպքով, մեկ բրիգադը մի բանվորական օրում կարող է մինչև 1000 ոշխար և այժ ճիճվահանել (մի ժամում մինչև 120 գլուխ):

Այս ձևով կատարած դեհելմինթիզացիան բավական լավ բուժական արդյունք է տալիս: Դեհելմինթիզացիայից հետո կենդանիները առողջանում և կազդուրվում են, իսկ մահացության դեպքերը շատով դադարում: Սակայն, այն դեպքում, երբ հոտը սաստիկ ախտահարված է, ճիվանդ ոշխարներից շատերի թոքերում դեռ մնում են կենդանի պարագիտներ: Դրա համար հանձնարարվում է 10—15 օրից հետո նորից դեհելմինթիզացիա կատարել: Առավել սաստիկ ախտահարման դեպքում կարեկի է դեհելմինթիզացիան անցկացնել նույնիսկ երրորդ անգամ և այդպիսով ոշխարներին և այծերին ազատել դիկտիոնալուզով:

Դեհելմինթիզացիայից հետո համարավոր բարդություններից խուսափելու համար չպետք է այն զուգակցել մյուս մասսայական միջոցառումների հետ, ինչպես, օրինակ՝ խուզումի, այլ ճիճվային կամ վարակիչ հիվանդությունների նկատմամբ մշակումների հետ և այլն: Այդ աշխատանքները պետք է կատարել դեհելմինթիզացիայից առնվազն հինգ օր առաջ կամ հետո:

Պրոֆիլակտիկ դեհելմինթիզացիա կատարելու ամենալավ ժամանակը համարվում է աշունը, (Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները), այսինքն՝ ոշխարների մսուրային շրջանն անցնելիս, կամ նրանց ձմեռային արոտավայր փոխադրելու նախօրյակին: Դրանով կանխալում են ոշխարների մահացության դեպքերը աշնանը և ձմռանը՝ Գարնանը, ոշխարներին արոտ տանելուց, կամ նրանց ձմեռային արոտավայրերից գյուղամերձ արոտավայրեր փոխադրելուց առաջ նույնական պետք է ենթարկել ճիճվահանման և այդպիսով նրանց ազատել մնացած պարագիտներից, իսկ արոտավայրի թթվուրներով ախտավորումը՝ կանխել:

Դեհելմինթիզացիայի ժամանակ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել կենդանիների խնամքի և կերակրման վրա, ապահովելով նրանց լավորակ կերով, որի մեջ պետք է նաև խտացրած կեր լինի:

Դեհելմինթիզացիան անցկացնելուց հետո պետք է ոշխարների հոտը 5—6 օր պահել շենքի մեջ, իսկ տաք եղանակներին՝ աղալներում, որից հետո տանել այդ տարի շոգտագործված արոտա-

վայր: Այդ ժամանակամիջոցում հավաքված գոմաղբը պետք է մշակել բիոթերմիկ (կենսա-ջերմային) մեթոդով (տես «պայքարի միջոցները ֆասցիոլոզի դեմ» գլուխը), կամ այրել: Եթե գոմաղբը որպես վառելիք է օգտագործվում, ապա աթար պետք է պատրաստվի կենդանիների մուտքից ազատ, ցանկապատված տեղերում:

ԴԻԿՏԻՈԿԱՍԻԼՈԶԻ ԴԵՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՍԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դիկտիոկառլոզի դեմ միայն բուժական միջոցառումներով պայքարելու միջոցով մենք լիարժեք արդյունք չենք կարող ստանալ, որովհետև կարող է ոչխարիների կրկնակի վարակում տեղի ունենալ: Ուստի պետք է միջոցառումներ ձեռնարկվեն արտաքին միջավայրում գտնված վարակից նրանց զերծ պահելու համար:

Մեզ հայտնի է, որ դիկտիոկառլուակի թրթուրները արտաքին միջավայրում առնվազն 6 օրից հետո դառնում են վարակիչ, իսկ վարակիչ թրթուրները, հատկապես արոտավայրերում, կարող են երկար ժամանակ պահպանել իրենց կենսունակությունը:

Այդ ինկատի ունենալով, անհրաժեշտ է արոտավայրը բաժանել մասերի և յուրաքանչյուր արոտամասում ոչխարիներին արացածնել ոչ ավելի, քան 6 օր, որից հետո նրանց փոխադրել երկրորդ արոտամասը, որտեղ նույնպես արածացնել 6 օր, այնուհետև երրորդ, չորրորդ արոտամասերը և այդպես շարունակ: Լավ կլինի, եթե տվյալ տարի մի վեցօրյակ արածացրած արոտամասը երկրորդ անգամ օգտագործվի միայն հաջորդ տարի: Սակայն, շատ տեղերում արոտավայրերի տարածությունը չեւ բավարարում, դրա համար էլ թույլատրվում է առաջին անգամ արածացրած արոտամասում երկրորդ անգամ արածացնել առնվազն 2—3 ամսից հետո. այդ ժամանակամիջոցում, արոտավայրում գտնված թրթուրների մեծ մասն արգեն ոչնչացված կլինի:

Արոտների օգտագործման այս կարգը դիկտիոկառլոզի, հեմոնիսոզի և մի շարք այլ ճիճվային հիվանդությունների դեմ ուղաքարելու ամենալավ մեթոդն է համարվում:

ՍՍՌ Միության մեջ այս մեթոդը լավ ուսումնասիրել են պրոֆեսոր ի. վ. Օրլովը և ուրիշները, որոնց հաջողին է մի շարք

վայլուրում իսպառ վերացնել ոչխարների դիկտիոնկառուողը և մէջքանի ուրիշ ճիճվային հիվանդություններ:

Արոտները հերթականորեն օգտագործելու այս մեթոդը լեռնային շրջաններում դեռ լրիվ ուսումնասիրված չէ: Անկասկած, նակարող է դրական արդյունք տալ նաև լեռնային շրջաններում:

Այդ շրջաններում նպատակահայրմար է կիրառել դիկտիոնկառողի դեմ պայքարելու հետևյալ կարգ՝ անապահով տնտեսություններում պետք է պլանային գեճելմինթիզացիա անցկացնել նախքան ոչխարներին ամառային արոտներ փոխադրելը, ամառային արոտավայրերից իջնցնելը, ձմեռային արոտավայրեր փոխադրելը կամ գյուղամերձ արոտավայրեր տանելը, ինչպես նաև մինչև մսուրային շրջանն անցնելը և գարնանը՝ արոտի դուրս բերելուց առաջ: Ինչպես ցույց են տալիս մեր դիտողությունները, մի շարք շրջաններում, որտեղ այս կարգի ճիճվահանումներ են կատարվում, դիկտիոնկառողի տարածվածությունը խիստ նվազել է, և մահացության դեպքեր գրեթե չեն նկատվում:

Ոչխարներին վարակումից դերձ պահելու համար կարևոր նշանակություն ունի նրանց շրելու կարգը: Պետք է արգելել ոչխարներին կանգնած, ծանծաղուտների, ճահիճների, լճակների, շրափուսերի, դանդաղահոս առուների շրով շրելը, այլ նրանց պետք է տալ աղբյուրի հոսող կամ ջրհորի ջուր:

Այնպիսի վայրերում (հաճախ տափաստաններում), ձմեռային արոտավայրերում), որտեղ ջրի մեծ պակաս է զգացվում, ոչխարներին շրելու համար ստիպված են օգտագործել լճակների կամ անձրեից և ձյունից հավաքած ջրերը: Անհրաժեշտ է այդպիսի ջրերը ամբարել մաքուր աւլազաններում, վերջիններս կահավորել կենդանիներին շրելու համար, և հետևել, որ ջուրը մաքուր մնա և չկեղտուովի կենդանիների կղկղանքով:

Մեր նկարագրած պայքարի միջոցառումները հետևողականորեն կիրառելու միջոցով՝ մենք կարող ենք իսպառ վերացնել դիկտիոնկառողը և նրանից առաջացող կորուսները:

Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՃԻՇՎԱՅԻՆ ՀԻՎԱՆ-		
ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	3—5	
ՃԻՇՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏճԱՌԱԾ ՎՆՍՍ-		
ՆԵՐԸ	6—7	
1. ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅՍԵՐԻ ՖԱՌԱՅԻՆ ԼՅԱՐԴԱՀԱ-		
ՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ (Քյափանակ) . . .	8—26	
Ֆասցիոլայի համառոտ նկարագրությունը . . .	9—10	
Ֆասցիոլայի զարգացումն ու կենսակերպը . . .	10—13	
Ֆասցիոլող հիվանդության զարգացումը . . .	13—14	
Ախտաբանական փոփոխություններ . . .	14—15	
Ֆասցիոլոզի ընթացքն ու նշանները . . .	15—16	
Ախտորոշում	16—18	
Ֆասցիոլոզի համաձարակաբանության մասին .	18—19	
Ոչխարների ֆասցիոլոզի բուժումը . . .	19—23	
Դեհելմինթիզացիայի կարգը	23—24	
Պրոֆիլակտիկ միջոցառումները ֆասցիոլոզի դեմ .	24—26	
2. ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅՍԵՐԻ ՄՈՆԻԵԶԻՈԶԻՆ		
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ	26—41	
Մոնիեզիայի հարուցիչը	27—30	
Մոնիեզիաների կենսակերպը	30—31	
Մոնիեզիոզի արտաքին նշանները	31—32	
Մոնիեզիոզի ախտաբանական նշանները .	32—33	
Մոնիեզիոզի ախտորոշումը	33—34	
Պայքարի միջոցները մոնիեզիոզի դեմ .	34—39	
Դեհելմինթիզացիայի կարգը	39—41	
3. ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅՍԵՐԻ ԷԽԻՆՈԿՈԶՈԶԸ		
.	41—47	

Էլսինոկոկի համառոտ նկարագրությունն ու կենսա-	
կերպը	42—44
Էլսինոկոկ հիվանդության զարգացումը և ախտա-	
բանական փոփոխումները	44—45
Էլսինոկոկողի նշանները	45—46
Պայքարի միջոցները էլսինոկոկողի դեմ	46—47
4. ՈՉԽԱՐԱՆԵՐԻ ՑԵՆՈՒԹՅՈՒՆ (պտուտախտ)	47—51
Ցենուրողի նշանները	49—50
Ցենուրողի ախտորոշումը	50—50
Պայքարը ցենուրողի դեմ	50—51
5. ՈՉԽԱՐԱՆԵՐԻ ՀԵՄՈՆԽՈԶԸ ԿԱՄ ՇՐԴԱՆԻ ՃԻՇՎԱՅԻՆ ՀԻ-	
ՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ	51—63
Հեմոնխուսի նկարագրությունը	52—53
Հեմոնխուսի կենսակերպը	53—54
Հեմոնխողի զարգացումը	54—56
Ախտաբանական փոփոխումներ	56—56
Հեմոնխողի նշանները	56—57
Ախտորոշում	57—58
Պայքարը շրդանի ճիճվային հիվանդության—հեմոն-	
խողի դեմ	58—61
Պրոֆիլակտիկ միջոցառումները՝ հեմոնխողի դեմ .	61—63
6. ՈՉԽԱՐԱՆԵՐԻ ԵՎ ԱՅՆԵՐԻ ԴԻԿՏԻՐԱԿԱՌԻՈՆ ԹՈՔԱՃԻՇ-	
ՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ	63—81
Ոչխարների և այծերի դիկտիրակառողի տարածումն	
ու պատճառած տնտեսական վնասները . . .	64—65
Դիկտիրակառողի հարուցի համառոտ նկարագրու-	
թյունը	65—66
Դիկտիրակառուախ կենսակերպը	67—69
Թրթուրների զարգացումը ոչխարի օրգանիզմում .	69—69
Հիվանդության զարգացումը	69—70
Ախտաբանական փոփոխումները	70—71
Հիվանդության բնթացքը և արտաքին նշանները .	71—73
Ախտորոշում	73—75
Ոչխարների և այծերի դիկտիրակառողի բուժումը .	75—80
Դիկտիրակառողողի դեմ գործադրվող պրոֆիլակտիկ	
միջոցառումները	80—81



Պատ. խմբագիր՝ Ե. ՄելիքՅԱՆ, Ս. ԵՐԿԱՆՅԱՆ
Տէլս. խմբագիր՝ Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մրգագրիչ՝ Հ. ԳԱԶԱՐՅՈՒՅՅԱՆ
Կանտրոլ սրբագրիչ՝ Ե. ՊՏՈՒՊՅԱՆ

Վ.Յ. 03385. Պատվիր 169, Տիրաժ 2000, Հեղ. 4մմ. տպագր.
Տամ. 5,5 Հանձնված է արտադրության 8 X 1947 թ.
Ստորագրված է տպադրության 15/V 1948 թ.

Ղետհատի տպարան, Երևան, Լենինի փող. Հ 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008089

25883

FILE 4 B.

A II
19125